



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



~~1430~~

91  

---

m-1

UNIVERSITY OF TORONTO

B.

THE UNIVERSITY OF TORONTO

LIBRARY

1916



UNIVERSITY OF TORONTO

1916

1916

Կարճ Դառն, Խորհրդ. Կ.

2

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա.

ՎԱՆ ԲԱՂԱԲ ԵՒ ԻԻՐ ՇՐՋԱԿԱՅԻ

ՎԱՆՆՅԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱԾԱՐ

4368  
II-534

Գրից  
Խորհրդ. Կ. Խորհրդ. Կ.:



ՎԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Վ. ԱՐԾՈՒՈՅՆ

Ի ՎԱՐԱԳ

= 1883 =

Երուսաղիմի Լազարիանց.

ՉՊՏՈՒՄ

ԿՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆՆԵՐ

ՔԱՅՈՑ ԱԳԱԳՐԱՆ ԸՎԵՐՈՒԹԵԱՆ

161

ԳՐԱԳՐԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏԵՄԱՐԱՆ  
ԲՈՒՆԻՍԻՅՆ

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Դպրոցական մանուկներու համար պատ-  
րաստուած Հայրենագիտութեան սոյն դա-  
ռագիրքը բաժնուած է երեք մասերու՝

Ա.—Վան քաղաք և իւր շրջա-  
կայք, կամ Հայրենագիտութիւն վանայ.  
Վանեցի մանուկներու համար:

Բ.—Վասպուրական նահանգ.  
Վասպուրականցի մանուկներու համար:

Գ.—Հայաստան Աշխարհ. Հայ  
մանուկներու համար:

Հայրենագիտութեան սկզբնական դասե-  
րու մէջ ուսանող մանկան ծնողական տունը,  
պարտէզը, փողոցը, դրացեաց տները, դա-  
ռարանը, վարժարանը, զանոնք շրջապատող  
առարկաններ, տեղերը, մանկան բնական  
զիւղն ու քաղաքը նորա ամենաազնիւն եւ  
բնական Աշխարհացոյց քարտէզն է՝  
որոյ վրայ նա շոշափելի կերպով կը տեսնէ  
իւր ուսանելի առարկայն, համոզմամբ կը բռնէ  
նորա կարեւորութիւնն ու նշանակու-

Թիւնք: Նոքա կուտան նախագաղափար հե-  
ռու տեղերու, լերան, քաղաքի և աշխարհի  
վրայ, կ'առաջնորդեն մանկան համեմատել  
գիւղն ու քաղաքը, լիճն եւ ծովը, բլուրն  
եւ լեռը և նոյն համեմատութենէն՝ գաղա-  
փարել նոյա տարբերութիւնը տարածու-  
թիւնը ու բարձրութիւնը:

Ամէն քաղաք, գիւղ, նոյն իսկ ամէն  
տունն ու վարժարանը Հայրենագիտութեան  
սկզբնական դասերու վերաբերեալ ուսանե-  
լու առանձինն մասեր ունի, զորս կարեւոր  
են ուսանիլ անոնց՝ որք նոյն տան կամ տեղի  
մանուկներ են: Այս պատճառաւ ուսուցչին  
կը մնայ յարմարցնել իւր սկզբնական դասերը  
մանկան բնական կամ պարսպած տան,  
վարժարանին, փողոցին, յետոյ նորայ շրջա-  
կայք, մօտաւոր դրացեաց տները, թաղեր,  
հրապարակ եւ այնպէս հետզհետէ սահմանը  
ընդարձակելով աւելի հեռու բնակութեանց,  
քաղաքի, գիւղի, լերան, դաշտերու և օտար  
աշխարհաց վրայ տանել իւր առաջնորդու-  
թիւնը, ի նկատի ունենալով թէ ինքը  
Հ ա յ ր ե ն ա գ ի տ ու թ ի ւ ն ուսուցանելու  
մէջ պիտի ընթանայ միշտ փոքրէն առ մեծ  
կամ մասնաւորէն դէպի ընդհանուրն:

Հայրենագիտութեան այս դասերը Առա-  
ջին տարւոյն համար սովորաբար հետեւեալ  
կարգը և բովանդակութիւնը կ'ունենան:

Ա — Դասարանք, նորա մասերը, պատե-  
րու համեմատական եւ աշխարհագրական  
գիրքը, աշխարհի գլխաւոր և երկրորդական  
կողմեր: Կողմնացոյց: Դասարանի նկարագը-  
րութիւնը:

Բ — Յատակագիծ պատրաստելու համար  
գծաչափ ( փոքրաչափ ) մատնաչափ, ոտնա-  
չափ, կանգուն եւ ուրիշ գործածական չա-  
փերը: Դասարանի մեծութիւնը: Դասարանի  
յատակագիծը:

Գ — Վարժարան, նորա մասերը, վարժա-  
րանի նկարագրութիւն, աշակերտաց պարսպ-  
մունքը: Վարժարանի յատակագիծը:

Դ — Վարժարանի շրջակայք, փողոցը,  
պարտէզը, մերձաւոր դրացեաց տները: Վար-  
ժարանի փողոցի յատակագիծը:

Ե — Քաղաքի կամ գիւղի գլխաւոր բա-  
ժանումներ, գիրքը, տարածութիւնը, նշա-  
նաւոր շինութիւններ, տեղեր, եկեղեցիք,  
վարժարաները: Քաղաքի յատակագիծը:

Զ — Քաղաքի շրերը, գետ, աղբիւր,  
վտակ, լիճ, ծով: Տեղի կլիմայն, կանոնաւոր

Ու անկանոն հովերք, նոյա քրատն կամ արձ  
գիւնարեբրութիւնք:

Է — Երկինք, նորա ձեւք, գոյնք, ցերեկք,  
դիշերք, Արեւ Լուսին, աստղեր, նոցա ձեւք,  
Մէգ, ամպ, անձրեւ, ձիւն, կարկուտ, կայ-  
ժակ, ծիածան:

Ը — Քաղաքի պատմութիւնք, կառավա-  
րութեան պաշտօնեայք, գլխաւոր և օժան-  
դակ ժողովներք, Ազգային ժողովներք, Ժո-  
ղովոց նախագահք, Ազգային պաշտօնեայք,  
Քաղաքի բնակչաց պարապմունքք, արհեստք,  
վաճառականութիւնք, գլխաւոր բերքերք:  
Բնակչաց թիւ, կրօն, ազգութիւնք, նշանա-  
ւոր գերաստաններք:

Թ — Քաղաքի շրջակայք, դաշտ, լեռ,  
ձոր, հովիտ, բլուր: Գիւղ, համեմատութիւն  
գիւղի և քաղաքի մէջ, գիւղացոց պարապ-  
մունքք, կենդանիներ, բոյսեր, հանքերք:

Ժ — Գաւառի սահմանք, շրջակայ գա-  
ւառաց նահանգաց և ընդհանուր Հայաստա-  
նի վրայ համառօտ տեղեկութիւններ:

Գարոցական ուսանելի առարկայք ման-  
կան դժուար կամ դիւրբմբռնելի լինելք՝  
կախումն ունի զանոնք ուսուցանելու եղա-  
նակէն: Որչափ պատրաստ լինի մանուկը

նախնական դասերով, այնչափ աւելի հեշտ  
եւ վտահ քայլեր կ'առնու ապագայ ուս-  
մանց մէջ: Դիւրբմբռնելի դասերը անոնք են՝  
որք բնական կարգմբ ունին, որք կ'ընթանան  
հեշտ եւ ծանօթ առարկաններէն դէպի դը-  
ժուարն եւ անծանօթք: Այս ուղղութեան  
հասնելու համար միշտ պէտք են մեզ նա-  
խապատրաստական դասեր: Բայց ա-  
հա տարիներ կանցնին եւ դեռ ուսմանց այդ-  
ամենակարեւոր և հիմնական մասը  
կը պակսի մեր դպրոցներէն: Ինչ որ պէտքէ  
զարգացած մանուկներուն ուսուցանել, նոյ-  
նով կը պարապինք դեռահասներու հետն  
էլ: Այս պատճառաւ իսկ մանուկները մոլո-  
րուած չը կարեն որոշ գաղափարաւ ըմբռ-  
նել զայն՝ զոր կուսանին:

Հայրենագիտութեան դասերը աւանդե-  
լու ժամանակ աշակերտաց ուսման աստիճա-  
նի եւ ըմբռնման համեմատ կարելի է աւելի  
բազմօրինակ հարցեր յառաջ բերելով ըստ  
ամենայնի հասկանալի ընել զանոնք ուսանո-  
ղին: Ընդնմին դասադրքիս մէջ առ հարկին  
խիստ համառօտ տրուած մասերը ընգարձա-  
կելով աւելի մանրամասն տեղեկութիւն տալ  
մանկան Պար հայրենեաց վրայ: Զայս կարև-

որ է առաւելագէտ քաղաքի եւ իւր շրջան  
կայ տեղերու եւ բնակչաց պարապմանց վրայ  
գրուած ութը եւ իններորդ գլուխներու մէջ:

Յատակագծի պատրաստութեան համար  
ինքը՝ ուսուցիչը պէտքէ գրատախտակի  
վրայ ցոյց տայ աշակերտաց զայն պատրաս-  
տելու եղանակը, չափերու համեմատութիւն,  
յատակագիծը փոքրացնելու օրէնքները,  
պէտքէ բացատրել թէ ի՞նչպէս յատակա-  
գծի առարկայն որչափ մեծնայ, համեմատա-  
բար նոյնչափ էլ նորա գծաչափը կ'ամփոփի,  
կը փոքրանայ: Օրինակ՝ երբ մի դասարանի  
կամ վարժարանի յատակագիծը գծենք,  
կարողենք զայն մեր թղթի կամ գրատախ-  
տակի մեծութեան չափով ընդարձակել,  
բայց մի և նոյն մեծութեան թղթի վրայ  
երբ վարժարանի շրջակայք, քաղաքի միւս  
փողոցներ, հրապարակ կամ ամբողջ քա-  
ղաքը գծել ուզենք, յայնժամ հետզհետէ  
գծաչափը կը փոքրացնենք, այնպէս որ մեր  
վարժարանը յատակագծի վրայ մի ամենա-  
փոքր տեղը կը բռնէ:

Առարկաներու բացատրութեանց մէջ  
նոյնպէս ուսուցչին կը մնայ գործնականապէս  
ցոյց տալ աշակերտին նոյն առարկայի ձեւը,

չարունակ գծել զայն գրատախտակի վրայ  
յայտնելու համար թէ Աշխարհացոյց տախ-  
տակներու վրայ ինչ ձեւ կունենայ մի լեռ,  
բլուր, աղբիւր՝ գետ, լիճ, ծով եւ կամ  
հրուանդան, լեզու, ծովածոց, կղզի, թե-  
րակղզի եւ: Այնուհետեւ պահանջել որ ա-  
շակերտը ընդօրինակէ զանոնք, որպէս զի  
տակաւ առ տակաւ ուսանի իւր լածք՝ գա-  
ղափարել եւ տեսածը՝ գծագրել, որուն ընդ-  
միջա կը կարօտի մանուկը իւր ուսանողական  
շրջանի մէջ:

1883 Մարտ 10 վարագ

Խ. Խ.

(խորհրդանշան խորհրդի):



Հայեաց ասէ, մանուկ, և տես :

Չինչ 'ի տախտակբդ գծագրես .

Չի մովսիսիդ ու նման ես .

Չգիրս Աստուծոյ կրկին գրես :

Չայնէ առ քեզ, մանուկ ուշիմ .

Թէ ականջօք լուր զբանս իմ .

Ուսման գրոց լեր մտերիմ,

Եւ բարձրանաս դու 'ի յերկին :

Չանիւ հասցես ասէ չնորհաց,

Մի ծոյլ կենար և դեգերած .

Մի սիրեր քուն դանդաղանաց .

Մի արթնութիւն զբաղանաց :

Փութա, մանուկ, վարժիլ անգուլ .

Որ 'ի չնորհաց չ'լինիս ամուլ .

Եթէ մտօքդ ես բութ եւ գուլ .

Չանիւ զիմաստըն կեր և կուլ :

Ն . Ծ .

Ա — ԴԱՍԱՐԱՆ . ՆՈՐԱ ՄԱՍԵՐԸ . ԳՐԱԿԱՆ

ԵՒ ԴԱՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ .

1 — Այն տեղը՝ ուր մանուկներ կը ժողովին ուսանելու, կ'անուանին՝ Դպրոց . Վարժարան կամ Ուսումնարան, (վարժելու, ուսանելու տուն) : Իսկ վարժարանի այն մասը՝ ուր նոքա (մանուկները) աշխատելու կը նստին՝ Դասարան : Ամէն դասարան՝ ունի դուռ, յատակ, առաստաղ, չորս հաւասար հեռաւորութեամբ պատեր և լուսամուտներ :

2 — Դասարանի մէջ կան՝ նստարան, գրասեղան, գրատախտակ, վառարան : Նոյնպէս թուղթ, գրիչ, մեջան, մատիտ, դասագիրք և ուրիշ գրական և դասական առարկայք :

3 — Դասարանի մի պատից կախուած կը լինի Ժամանակացոյց, դասառութեան ժամերու ցուցակը, որոյ առաջնորդութեամբ պատրաստ կը լինին աշակերտները որոշեալ

ժամուն իրենց համարը տարու : ժամանակա-  
ցոյցին վրայ նշանակուած է նաև աշակերտաց  
գարոց գնալու , ճաշի , դրօսանաց և ար-  
ձակման ժամերը :

4 — Դասարանի այն կողմը՝ ուր ուսուցչի  
աթոռ և գրասեղանն է և ուր ինքը՝ ( ուսու-  
ցիչը ) նստած կամ կանգնած կը դասախօսէ,  
կ'անուանի դասարանի վերի կողմ, նորա  
դէմ՝ վարի կողմ: Իսկ մնացեալ կողմերուն՝  
դասարանի երկու կողմերու պատեր:

1 — Ո՞ր դեղին վարձարանի համարը կ'անուանենք :  
Ո՞րն է գասարանը : Դասարանը ի՞նչ տեսքը ունի :

2 — Ի՞նչ առարկաներ կան մեր դասարանի մէջ: Ի՞նչ  
թանի կը ծառայեն նոյն . Որո՞նք են գրական առարկա-  
ներ : Ի՞նչ կընեն աշակերտները գրական առարկաներով:

3 — Ժամանակացոյցին վրայ ի՞նչ կայ նշանակուած :

4 — Ո՞րն է գասարանի վարի եւ վերի կողմերը :

Ո՞ր կողմերու վրայ կը գործեն դասը եւ լրսու-  
մարտները :

Բ — ՍՃԻՍԱՐՉԻ ԳԼԵԱԽՈՐ ԿՈՂՄԵՐԸ

1 — Մենք ինչ գիրքի մէջ որ լինինք՝ նրս-  
տած կամ կանգնած , կուենանք մեր աջ և  
ձախ , առաջի և ետեւի կողմերը :

Այս կողմերու անուամբ եթէ ուզենք որոշել  
թէ այս կամ այն առարկան մեր ո՞ր կողմ կը  
գտնուի , այն ատեն սովորաբար կ'ասենք՝  
այս գիրքը , գրասեղան , աթոռ , մեր աջ  
կամ ձախ կողմ , մեր առաջ կամ ետեւն է :

Բայց երբ գիրքերնիս փոխենք , աջէն ի  
ձախ կամ ետեւի կողմ դառնանք , մեր  
չըջապատի առարկաներն էլ բնականաբար  
կը փոխին , մեր աջ , ձախ , առաջի կամ ե-  
տեւի կողմ կը դառնան :

Առարկաներն էլ իրարու նկատմամբ կող-  
մեր ունին , օրինակ՝ կ'ասենք որ դասագիրքը  
թուղթը կամ գրիչը , գրասեղանի առաջ ,  
ետեւ , այս կամ այն կողմն է :

2 — Այս կողմերով կորոշենք այն առարկա-  
ներ , որոնք մեր շուրջ , մեզնից քիչ հեռու ,  
մեր դասարանի , սենեակի կամ տան մէջն  
են : Բայց տնից դուրս մեզնից աւելի հեռու  
տեղեր , մեր դրացիի տուն պարտէզը , մեր  
տան փողոց կամ աւելի հեռու տներ , գիւղ  
քաղաք , լեռ , դաշտ և ուրիշ զանազան տե-  
ղերու կողմերը որոշել ուզենք , այն ատեն  
աշխարհի կողմերու անուամբ կ'ասենք , մեր  
դրացիի տուն , մեր փողոց , այս ինչ գիւղ  
կամ քաղաք , կը գտնուի մեզնից Արեւելք ,  
Արեւմուտք , Հիւսիս , Հարաւ :

Արևելք կըսուի երկրի այն կողմին որ տե-  
զից ամէն օր կը տեսնենք որ Արևը դուրս  
կ'ելլէ , կը ծագի եւ ամէն կողմից մեզ շը-  
ջապատող երկնակամարի վրայ կը բարձրա-  
նայ : Արեւմուտքը երկրի այն կողմն է , որ  
տեղ Արեւը երեկոյեան դէմ երթալով մեր  
աչքերէն կը ծածկուի , 'ի մայր կը մտնէ :

Իսկ Հիւսիսի եւ Հարաւի կողմերը որոշելու  
համար կը դարձնենք երեմնիս դէպի Արեւ-  
ելք , որ ժամանակ մեր աջ կողմ Հ ա Ր աւ ե  
ձախ կողմ Հ իւ ս ի ս է :

3 — Այս կողմերը որ Աշխարհի Չ ո Ր ս Գ Լ-  
խ աւ ո Ր կողմեր կ'անուանին , կը տեսնենք  
որ խաչածեւ իրարու դէմ կիյնան : Արեւելքի  
դէմ Արեւմուտքն է , Հարաւի դէմ Հիւսիս :  
Երբ ասոնցմէ մինք դիտենք դիւրին կը լինի  
մեզ միւսներն էլ գտնալ եւ որոշել :

Երկրի այս կողմերը կը որոշուի նաև Կ ո Ղ մ-  
ն ա ց ո յ ց ո վ Ա Ր Ե Ի Ժ ա մ ա ց ո յ ց ո վ ե  
առարկաներու ստուերով որ միշտ արևի հա-  
կառակ կողմի վրայ կը ձգուի : Եւ որովհե-  
տեւ արեւը երկրի երեք ( Արևելք , Հարաւ ,  
եւ Արեւմուտք ) կողմերու վրայ միայն կը լինի,  
ուստի կ'ասենք , հիւսիս այն կողմն է ուր  
Արեւը չ'անցնիր եւ Հարաւ այն կողմը՝ ուր

առարկաներ ստուեր չունին եւ ուր արեւը  
կէսօրին կը բարձրանայ :

1 — Ո՞րն է Տըւ Վ ա յ Կ ու Վ Ե , Տըւ աւ Վ է Լ  
Երեւի Կ ու Վ : Ինչ առարկաներ կան Տըւ Վ Ե : Այն ա-  
ռարկաներ Տըւ ո՞ր կողմ կը գտնուին : Ե՞նե տեղերն է-  
քսինն անոս Տըւ ո՞ր կողմեր կը գտնուին : Դասարանք  
պարտե Տըւ ո՞ր կողմ կը գտնուին . նոյնպէս ըստաստար-  
նեք , դուռ , ճրարտիտակը :

2 — Հետո տեղեր , օրինակ՝ Բիւղ , Գաղաթ , Ինչ  
անասոք կամ կողմերով կը որոշուին : Արեւելք ո՞ր կող-  
մն է , Արեւմուտք , Հիւսիս , Հարաւ : Ինչ կերպով  
այս կողմերը կը ճանչցուին : Երբ երեմնիս դեպ Արեւելք  
դուրսնենք , Տըւ Կ ու Վ Ե Տըւ ո՞ր կողմեր կ'իյնան :

3 — Ե՞նե երեմնիս դեպ հիւսիս , կամ հարա-  
ւարկաներ , Տըւ Կ ու Վ Ե Տըւ ո՞ր կողմեր կը գտնուին ,  
Արեւելքի դեպ ո՞ր կողմն է . Հարաւն ո՞րը : Արեւ երե-  
քն ո՞ր կողմերու վրայ կը գտնուի , ո՞ր կողմ անտրև ե-  
ո՞ր անտրևեր կը մնայ : Որո՞նք են Տըւ դասարանք Ա-  
րեւելեան , Արեւմտեան , Հարաւի եւ Հիւսիսի պարտեր :

Գ — ԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ .  
ԿՈՂՄՆԱՅԻՆ

1 — Մեր արդէն սովորած չորս գլխաւոր  
կողմերէն 'ի զատ կան նաև չորս երկրորդա-  
կան կողմեր , որոնք նոյնչափ կարեւոր են

մեզ գիտնալ : Կը յիշէք անշուշտ որ Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս, Հարաւ, դէմու դէմ չորս անկիւններ կը կաղմեն խաչի ձեւով և մենք այն կողմերը գտնուող տեղերուն կամ շինութեանց կ'ասենք որ նոքա այս կամ այն կողմ կը գտնուին : Բայց կան շատ տեղեր, տներ, լեռ, գիւղ, քաղաք որ այն կողմերէն ոչ մէկի վրայ չ'իյնար, այլ կը գտնուի երկու գլխաւոր կողմերու, Օրինակ՝ Արեւելքի և Հիւսիսի մէջ տեղը կամ երկուքի ճիշտ անկիւն :

Ուրեմն աշխարհի գլխաւոր կողմերը մի մի անկիւններ էլ ունին, որք երկը որդական անկիւններ կ'անուանին՝ որ աստեք են՝ Արեւելեան Հիւսիս, Արեւելեան Հարաւ, Արեւմտեան Հիւսիս, Արեւմտեան Հարաւ :

2 — Զանազան կողմերէ վաճած հովերու ուղղութեան նայելով, աշխարհի վրայ ընդամեն երեսուն երկու կողմեր կը ճանչցուին : Այս կողմերը ցոյց տուող թուղթին կըսուի Հողմնացոյց կամ Կողմնացոյց, որոյ մի ծայրը Մաքնիսացեալ է և կը դուռնայ միշտ ՚ի Հիւսիս :

3 — Վարը դրուած Կողմնացոյցին պէս ամեն Աշխարհացոյց քարտիզի վերի կողմ Հիւսիս, վարը Հարաւ, աջ կողմ՝ Արեւելք և ձախ կողմ՝ Արեւմուտք է :

Հիւսիս



1 — Չորս գլխաւոր կողմեր էն յիշուան : Որոշտ են երկրորդական կողմեր : Ի՞նչ անան անին : Արեւելեան հիւսիս, հարաւ, Արեւմտեան հիւսիս, հարաւ մեր դասարանէ ո՞ր անկիւններ կ'իյնան : Այնպէս զորս գլխաւոր և երկրորդական կողմեր յեր ըսուան կամ ճրարութեամբ վրայ :

2 — Աշխարհի վրայ ընդամեն ամեն կողմ կը գտնուցորի : Ի՞նչ ցոյց կուտայ Կողմնացոյց : Ո՞ր կողմ կը դուռնայ ՚ի հարաւեան ճարը : Գիտե՞՞ք Կողմնացոյցը ի՞նչ

Տե՛ծա-՚նե՛ածք , գլխա՛սոր և երկրորդական կողմեր՛ով :

5 — Աշխարհացոյց տարեշնչերու հիւսիս , հարա՛սօր  
կողմն է : Ո՛ր կողմ՝ Արեւելք՝ Արեւմուտ : Գիշերակալ գրա-  
տարարակէ շրջա՛ գլխա՛սոր և երկրորդական կողմերը ,  
որոշեցե՛տ՝ Տեր դասարանէ աւարկաներու րեշերը և ուս-  
ցե՛տ՝ թէ նո՛տա՛ սօր կողմերու շրջա՛ կը գրանուի :

Դ — ՅԱՏԱԿԱԳԻԾ , ՉԱՓ , ԳԾԱՉԱՓ .

1 — Երբ մի առարկայի՝ օրինակ , գրքի  
կամ սեղանի վրայ նայենք , նորա վրայ եր-  
կու տարբեր չափ կը տեսնենք՝ Ե Ր Կ ա յ -  
ն ու թ ի ւ ն և Ղ ա յ ն ու թ ի ւ ն : Եթէ  
մի և նոյն ձևը իւր իսկական չափով թուղթի  
կամ գրատախտակի վրայ գծենք՝ այն կը  
լինի նոյն առարկայի Տ ա Ր ա ծ ու թ ե ա ն  
չ ա փ ը կամ յ ա տ ա կ ա գ ի ծ ը :

Մի առարկայի , տեղի կամ շինութեան  
յատակագիծը գծելու համար , նախ պէտ-  
քէ գիտնալ թէ՛ այն առարկայն ի՞նչ երկայ-  
նութիւն և լայնութիւն ունի :

Քիչ տարածութիւն ունեցող առարկա-  
ներ , տեղեր , չափերու համար կը գործածուի  
բթաչափ , ոտնաչափ և կանգուն : Ընդար-  
ձակ դաշտերու , երկիրներու համար՝ ձողա-  
չափ և մղոն :

Իսկ գծելու համար պէտք է , կարկին ,  
ուղիղ , ուղղանկիւն և եռանկիւն քանոններ :

2 — Տաճկաստանի մէջ գործածական են  
հետեւեալ չափերը , գծաչափ , մատնաչափ ,  
ոտնաչափ , կանգուն եւ ձողաչափ :

Մ ա տ ն ա շ ա փ

1691  
599  
665

12 գծաչափ կը կազմէ 1 մատնաչափ

12 մատնաչափ » » 1 ոտնաչափ

2 ոտնաչափ » » 1 կանգուն ճար-  
տարապետական :

3 կանգուն » » 1 ձողաչափ

3500 ձողաչափ 1 մղոն :


Այս չափերու առաջնորդութեամբ կըր-  
նանք մեր չը տեսած առարկաներու յատա-  
կագիծն էլ գծել , երբ նոցա երկայնութեան  
և լայնութեան իսկական չափը ունենանք :  
Եթէ առարկայն այնպէս մեծ լինի որ մեր  
թուղթը կամ գրատախտակը նորա մեծու-  
թեան չը բաւականանայ , յայնժամ կը փոք-  
րացնենք նորա չափը և առարկայի տարա-  
ծութեան 1/10 , 1/100 կամ աւելի փոքր  
մասը կ'առնենք , օրինակ՝ մի կանգունի փո-  
խարէն 1/4 կանգուն կամ մի մատնաչափ  
միայն :

Ամէն յատակագծի ներքեւ գծուած կը լինի առարկայի գծաչափ (փոքրաչափ), որպէս զի յայտնի լինի թէ ո՞րչափ է առարկայի իսկական մեծութիւնը եւ թէ նորա քանի՞ երրորդ մասը առնուած է : յայլմտ

Այս օրինակ գծաչափեր հետեւեալ ձեւը կունենան



3 — Գնենք այժմ մի դասարանի յատակագիծ իւր գծաչափով և հաշուենք նորա իսկական տարածութիւնը :



ԴԱՍԱՐԱՆ

ա. դասարանի դուռը, բ. լուսամուտներ, գ. ուսուցչի գրասեղան, դ. ավտու, ե. գլխաւոր դռան խորանարդ, զ. աշակերտաց գրասեղաններ :

Այս յատակագծի փոքրաչափին նայելով 14 կանգուն երկայնութիւն եւ 7 կանգուն լայնութիւն ունի : Սա ըստ կամս փոքրացուցած մի յատակագիծ է, մենք կրնանք դայն աւելի փոքր կամ մեծ գծել և ներքեւ դնել նորա համեմատութեամբ այնպիսի փոքրաչափ որ ցոյց տայ դասարանի իսկական տարածութիւնը : Ուրեմն ամէն կերպ յատակագծով կարողենք առարկայի տարածութեան չափը գտնալ, փոքրաչափը իւր մեծ չափին վերածելով : Մի և նոյն կը լինի նոսե դրան, լուսամուտներու, գրասեղանաց և դասական առարկաներու համար :

4 — Գծեցէ՛ք ուրեմն ձեր թուղթերու վրայ մի յատակագիծ որ ունենայ 8 կանգուն երկայնութիւն և 5 կանգուն լայնութիւն :

Փոքրացուցէ՛ք մի քառորդ թերթ թղթի վրայ 10 կանգուն երկայնութեամբ և 5 կանգուն լայնութեամբ մի տան յատակագիծ :

Նշանակեցէ՛ք ձեր գծած յատակագծի վրայ նորա Հիւսիս, Հարաւ, Արեւելք, Արեւմուտք կողմնացոյցի ուղղութեամբ :

Գծեցէ՛ք մեր դասարանի յատակագիծն էլ, նշանակելով սորա դրան, լուսամուտներ

րու, գրասեղանաց և գրատախտակի տեղեր  
իրենց համեմատական մեծութեամբ եւ հե-  
ռաւորութեամբ: Յետոյ գծուածք գրասե-  
ղանի վրայ դրէ՛ք աշխարհի գլխաւոր կող-  
մերու ուղղութեամբ և ցոյց տուէ՛ք նորա  
վրայ երկրորդական կողմերն էլ:

1 — Ի՞նչ է յադակաբէծ, զի յադակաբէծ գծելու հա-  
մար նախ ի՞նչ պէտք է պատրաստել: Ո՞րն է զի առարկայի  
երկայնութեան, լայնութեան: Քիչ հեռաւորութեան ու-  
նեցող առարկաներ ի՞նչ շաբէրով կ'որոշուին, զի շերք  
ինչով:

2 — Որո՞նք են գործածական չափեր: Մեր շք փե-  
սած առարկայի յադակաբէծք գծելու համար միշտ ի՞նչ  
պէտք է գիտնալ:

3 — Ո՞րն է գծաչափ, կարող էն գծաչափով առարկայի  
առարձանութեան ինչպիսի չափք գիտնալ:

4 — Ի՞նչ յեռանի մեր դասարանի դասուք, լսու-  
մոտընէրը, յադակը առաւորողը: Ո՞ր չափերով յարմար է  
մեր դասարանի մեծութեան չափք որոշել:

Ե — ՎԱՐԺԱՐԱՆ, ՆՈՐԱ ՄԱՍԵՐԸ, ՎԱՐԺԱ-  
ՐԱՆԻ ՅԱՏԱԿԱԳԻԾ:

1 — Մեր դասարանին կից կան ուրիշ սե-  
նեակներ և դասարաններ էլ, որք այս մեծ


շինութեան կամ վարժարանի մասերն են:  
Շատ վարժարաններ իրենց մէջ կունենան  
Սրահ, Թանգարան, Տեսչարան  
և Դասարաններ, որոնք այլևայլ  
կարգերու կը բաժնուին եւ այս բաժանում-  
ները ցոյց կուտան աշակերտաց ուսման աս-  
տիճանը:

Կրնա՞ք բնել թէ մեր վարժարանք ի՞նչ  
մասեր կամ բաժանումներ ունի, ի՞նչ են  
նոցա անունները, քանի՞ աշակերտ եւ ուսու-  
ցիչ կայ: Որո՞նք են ուսանելի առարկայք:

2 — Սոքա գիտնալէն վերջ սկսենք գծել  
մեր վարժարանի յատակագիծք, նորա բոլոր  
մասեր, և բաժանումներ, այնպէս որ մէն մի  
մասը իւր իսկական կողմի վրայ լինի եւ ու-  
նենայ իւր համեմատական մեծութիւն: գը-  
ծելէն յետոյ ցոյց տուէ՛ք վարժարանի սրահը,  
թանգարան, տեսչարան, դասաքանաց  
կարգը:

Իբր օրինակ գնենք այստեղ Ս. Սանտի-  
տեան օրիորդաց վարժարանի յատակագիծք,  
որ ունի սրահ, թանգարան, տեսչարան եւ  
չորս դասարաններ:

Ս. ՍԱՆՏԻՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ  
ՅԱՏԱԿԱԳԻԻՄ



ա . սրահ , բ . բ . դասարաններ , գ . տեսչարան , դ . թանգարան , ե . ե . լուսամուտներ , զ . վարժարանի դուռ :

Այս յատակագիծը 20 կանգուն երկայնութիւն եւ 14 կանգուն լայնութիւն ունի , զժուած է 1 1/2 մատնաչափ երկայնութեան եւ 1 մատնաչափ լայնութեան վրայ . փոքրաչափը սոյն կուտայ որ մի կանգունի փոխարէն առնուած է այս - զժաչափը :

3 — Գծենք ի նորոյ մի տան յատակագիծ որ 40 կանգուն երկայնութիւն եւ 25 կանգուն լայնութիւն ունենայ : Բաժնենք ըստ

կամս նորա մասերը՝ 10 կանգուն երկայնութեամբ եւ 5 կանգուն լայնութեամբ : Դնենք ամէն բաժանման դռներ, լուսամուտներ, յարմարաւոր տեղերու վրայ , որոշենք զրով նորա Հիւսիս , Հարաւ , Արեւելք , Արեւմուտք աշխարհի կողմերու ուղղութեամբ :

1 — Մեր դասարանին կէջ վարժարանի ո՞ր մասեր կը գործուին : Տեսչարան , սրահ , թանգարան մեր ո՞ր կողմի վրայ է : Վարժարանը արեւելակողմ տանի՞ մաս առնի , տանի՞ ի կիսին , հարաւ , սրահ + եւ այն մասերը :

2 — Ինչ փոքրաչափով քժեցին + մեր վարժարանի յարակախէ՞ք : Ո՞րտե՞ր նորա իսկական մեծութիւնը (դարձութիւն) : Կանի՞ կը բաժնուի մեր վարժարանը :

3 — Բանի՞ մասի բաժնեցին + մեր ի վերջոյ քժա՞ծ պան յարակախէ՞ք , մե՞ն մէ մասը կն՞լ երկայնութիւն եւ լայնութիւն առնեցա՞ւ Կանի՞ դուռ , լուսամուտներ :

Չ — ՎԱՐՃԱՐԱՆԻ ՇՐՋԱԿԱՅԵ

1 — Վարժարանի դռնից դուրս ելնելով արեւելակողմ կը տեսնենք մեր եկեղեցին , Տաճարը , եկեղեցւոյ բակը , քիչ հեռու գերեզմանատուն եւ մի փողոց (այս անուն) որ կը տարածուի դէպի ( Հիւսիս , Հարաւ , Արեւ



մուտք) և յառաջ երթալով կ'ելլենք (այս-  
ան) փողոցի վրայ : Մեր աջ ու ձախ կողմեր  
կան դրացիներու տներ , պարտէզ և ծառաս-  
տանք : Վարժարանի մի կողմի վրայ է իւր  
սեպհական պարտէզը , ուր ամէն օր աշա-  
կերաններ զբօսնելու կ'ելլեն : Պարտիզի մէջ  
կայ մի բաց և ընդարձակ տեղ , որ մարմ-  
նամարզի համար կը ծառայէ : Սորա մօտն է  
վարժարանի աղբիւր կամ ջրհորը : Եթէ աս-  
տի դէպի հիւսիս կամ հարաւ երթանք կը  
մտնենք (այս ան) դրացիի պարտէզը :

Թուենք այժմ թէ մեր վարժարանի  
չուրջ , ուրիշ ինչ տներ և այգիներ կան :  
Մեր ո՞ր կողմերու վրայ կ'իյնան , ինչ անուն  
ունին : Ինչ անուն ունի վարժարանի փողոցը :  
2 — Գծենք ՚ի նորոյ մեր վարժարանի  
յատակագիծը մեր գրատախտակի վրայ , նո-  
րա շուրջ դնենք մեր եկեղեցին , փողոցը ,  
պարտէզը , աղբիւրը , մօտակայ դրացեաց  
տներ : Բայց պէտք է մի աջախի փոքրաչափ  
առնուլ , որ մեր թուղթը կամ գրատախտակ  
բաւական չիսի թէ վարժարանի և թէ շրջա-  
կայ տեղերու յատակագիծին : Նոքա պիտի  
ունենան իրենց համեմատական հեռաւո-  
րութիւն գլխաւոր կողմերու ուղղութեամբ :

Փողոցը գծելու համար պէտք է դնել եր-  
կու հսուասար հեռաւորութեամբ գծեր , այս  
ձեւով — . նորա աջ և ձախ կողմերն էլ  
փողոցի վրայի տներ և պարտէզներ :

1 — Մեր եկեղեցին վարժարանի ո՞ր կողմէ , Տա-  
ճարը , եկեղեցոյ բակը , գերեզմանոցը : Ինչ է վարժա-  
րանի փողոցի անուն , եթէ այն փողոցին դեպի հիւսիս կամ  
հարաւ քանիտ ինչ փողոցի կամ հրապարակի վրայ կ'ելլեն :  
Մեր վարժարանի շուրջ ինչ տեղեր , տներ և պարտէզներ  
կան , Նոքա ո՞ր կողմերու վրայ կ'իյնան : Ինչ տեղեր ,  
կամ ծառեր կան վարժարանի պարտէզին մէջ , ինչ անուն  
ունին :

2 — Ինչ մասնակցութեամբ գործադրուի գծերէն  
վարժարանի և շրջակայ տեղերու յարաչափքը : Փողոցը  
ինչ յիշուի կը գծուի : Ինչ կանեանայ էր ալ և յա-  
կողմերը :

Է — ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱԻՈՐ ԲԱԺԱՆՈՒՄ-  
ՆԵՐ , ԴԻՐԲ ԵՒ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ .

1 — Վան քաղաքը երկու գլխաւոր մա-  
սերու կը բաժնուի՝

Ա — ՔԱՂԱՔԱՄԷ 2

Բ — ԱՅԳԵՍՏԱՆ

Ա — ՔԱՂԱՔԱՄԷՉ

Քաղաքամէջ կ'անուանի վանայ այն տա-  
րածութիւնն, որ կրկին պարխարներով եւ մի  
մեծ խրամով շրջապատուած է: Ունի երեք  
հին եւ մի նորաբաց դռներ:

Ա.— Միջին դռն ( օրթա-քափու )

Բ.— Նոր դռն

Գ.— Գաւրէժի դռն ( թէվրիզ-քափու )

Դ.— Նաւահանգիտ դռն ( իսքէլէ-քափու ):

Քաղաքամիջի հիւսիսակողմը բարձրա-  
ցած է վանայ Բ ե ր դ ը: Հսրաւակողմը,  
քաղաքի կրպակներ ( շուկայք ) . իսկ մէջ  
տեղերը՝ հասարակաց աներ եւ մի քանի  
պարտէզներ արեւմտեան կողմի վրայ: Այս  
տեղը կ'իյնայ խ օ ո խ օ ո անուն մեծ եւ  
պտղատու ծառերով զարդարուած պարտէզ,  
որոյ մէջ բերդի ստորոտէն կը վազէ մի ա-  
ռատ աղբիւր, որ երկու քարափոր աւազա-  
ներու մէջ լեցուելով կ'երթայ սուղեւ յիշեալ  
ծառաստանը:

Բերդը կը բաժնուի մի ջ ի ն եւ ա ր ա ա-  
ք ի ն մասերու: Առաջինի վրայ կայ զինա-  
բան, միժերանոց մի հին եկեղեցի, ( այժմ  
հնուձեանոց դիւարան ) եւ մի մկկիթ: Բերդի

հիւսիս եւ հարաւակողմ կան տասնէն աւելի  
մեծաչէն քարափոր այրեր եւ բեւեռագիր  
արձանագրութիւնք:


2 — Շուկայի արեւելեան կողմը՝ նորաբաց  
դրան հանդէպ կ'իյնայ կառավարութեան  
Պաշտօնատեղին: Անորմէ դէպի հիւսիս  
Հայոց Առաջնորդարանը, Սուրբ Նշան եկե-  
ղեցոյ կից:

Քաղաքամէջ կան եօթն եկեղեցիներ՝ Ա,  
Սուրբ Պօղոս, Բ. Սուրբ Առաքեալ, ուր կայ  
Շուշանեան Օրիորդաց վարժարան, Գ. Սուրբ  
Վարդան, Դ. Տիրամայր՝ ուր Յիսուսեան  
վարժարանն է, Ե. Էջմիածին կամ Սուրբ  
Նշան: Զ. Սուրբ Սահակ, Է. Սուրբ Միքայիլ  
ուր եկեղեցիներ:

Քաղաքամէջ կայ չորս գլխաւոր մկկիթ-  
ներ, որոցմէ նշանաւոր են՝ Ուլու ճամին եւ  
Խուրշին ճամին:

Կառավարութեան վերաբերեալ շինուա-  
ծոց մէջ երեւելի են՝ Զօրանոց, Զինարան,  
Հիւանդանոց, Ամբար եւ Բաղանիք: Մնա-  
ցեալ շինուածոց մէջ մեծ տեղ կը բռնեն  
Կ ր ա կ ն ե ր ( շուկայք ) որք իրենց տե-  
րերու կամ շինողի անուամբ կը ճանչցուին:

ՔԱՂԱՔԱՄԻՋԻ ՅԱՏԱԿԱԳԻԹԻ  
ՀԻՒՄԻՍ



ՀԱՐԱԻ

- 1. Կառավարութեան դուռ . 2. Ազգային Առաջնորդարան .
- 3. Յիսուսեան վարժարան . 4. Զորանոց . 5. Զինարան . 6. Մարտուն
- 7. Մուրք Պողոս . 8. Միջին դուռ . 9. Գարեջի դուռ . 10. Նա.
- ւահանգիստի դուռ . 11. Նոր դուռ . 12. Խորխուռ .

3 — Քաղաքամիջի Յատակագիծը մեծ-  
ցնելով ցոյց տանք նորա վրայ թէ որո՞նք են  
քաղաքի նշանաւոր տեղերը : Ի՞նչ հեռաւո-  
րութիւն ունին իրարմէ : Ո՞ր կողմերու վրայ  
կ'իյնան : Եթէ Յիսուսեան վարժարանը կեդ-  
րոն համարենք , այս վարժարանէն ՚ի շուկայն  
կամ Ազգային Առաջնորդարանը զնալու հա-  
մար երեսնիս ո՞ր կողմերու վրայ կը դարձը-  
նենք և ո՞ր փողոցներէն անցնելով նոյն տե-  
ղեր կը հասնինք :

1 — Վան՞ տալու տանէ՞ գլխաւոր ճանապարհ-  
ի բաժնուի : Որո՞նք են այն բաժնաւորները : Ո՞ր տարա-  
ձաւեան կ'ընտէ՞ փողատակը . Բանի՞ դուռ ունի : Ո՞ր  
կողմերու վրայ կ'իյնան նոյա : Բերդը տալատակէն ո՞ր  
կողմի վրայ է : Շուկայն և հասարակաց տեղը ո՞ր կող-  
մերու վրայ : Բերդը տանի՞ ճանապարհի բաժնուի : Բեր-  
դի վրայ են՞ շինութեաններ կամ նշանաւոր տեղեր կան :

2 — Խորխուռ ըստած ծառատունիլը ո՞ր կողմի  
վրայ կ'իյնայ : Ի՞նչ կայ նորա տեղը : Փողատակէն ո՞ր կող-  
մի կտրուկաբանեան պաշտօնատեղէն , ո՞ր դրան հան-  
դեղ : Ո՞ր կ'իյնայ Ազգային Առաջնորդարան , ո՞ր է-  
կեղեցոյ ճոյ : Փողատակէն տանի՞ Եկեղեցի կայ : Փա-  
նի՞ վարժարան . Են՞ է նոյա անուաններ . ո՞ր կողմերու  
վրայ կ'իյնան . որտե՞ղ աշակերտ ունին : Փանի՞ գլխաւոր  
ճշխի կայ : Ո՞ր կողմերու վրայ են զբանոց , շինարան ,

աբար, հիանալիս և բազմեի : Ո՞ր կողմն է շահ  
կայն, որոնք են գլխաւորներ և Բնական ուսման :

5 — Ի՞նչ փութալով թշուառ է Բարձրագոյն Յա-  
րարդի, մեծ որչափ մեծցուցին զայն, գլխաւոր  
շահներ որեպէս ո՞ր կողմերու վրայ դարձուառնին : Յե-  
տեան վարձարանն է շահայն կամ այլ ուր գնացած  
ժամանակ, երեւին ո՞ր կողմերու վրայ դարձելով կը  
տալին : Ձեր որանին է որչորոց եկած ժամանակ (Հմայեակ,  
Տէգրան, Վարդան) երեսուր ո՞ր կողմերու վրայ դարձե-  
լով կուգաս և ո՞ր փողոցներն կ'անցնին : Դու ել ասա՛  
վահան, Արեւն :

Բ — ԱՅԳԵՍՏԱՆ

1 — Այգեստանը իւր հարաւակողմի թա-  
ղերով ժամ ու կէս երկայնութիւն և մի ժամ  
լայնութիւն ունի : Տարածուած է քաղաքա-  
միջի հարաւակողմից դէպ արեւելան հիւ-  
սիսակողմ : Դիրքը դաշտային է, տեղ տեղ  
փոքր բարձրութիւններ կան՝ Կ Լ ո Ր դ ա Ր,  
Ա ւ օ ի դ ա Ր, Շ ա ն օ ի դ ա Ր, Պ ո Ղ  
պ ա տ ի դ ա Ր . կան մի քանի փոքր ձո-  
րեր առաւել ջրի հոսանքներէն կազմուած :

2 — Այգեստանը իւր ամբողջութեամբ  
երկու գլխաւոր մասերու կը բաժնուի՝  
Ա—Այգեստան, Բ—Կլոր դար, և Շամիրա-  
մայ թաղ :

Այգեստան կոչուած մասը մի եռանկիւն  
ձև ունի, որոյ արեւմտեան ծայրը՝ Հայկա-  
վանք եկեղեցին, արեւելեան հարաւը՝ Արա-  
րուց եկեղեցին, արեւելեան հիւսիսը՝ Յան-  
կոյսձորոյ եկեղեցին է :

Այգեստանեայց այս գլխաւոր և նշանա-  
ւոր մասը՝ երկու խաչաձև փողոցներով ի-  
րարմէ կը բաժնուին : Առաջի փողոցը կ'սկսի  
Հայկավանքէն և կը տարածի մինչ նորա-  
տունկ այգիներու ծայրը : Երկրորդը՝ կ'սկսի  
Ակոբի զիւղի առջեւէն և կը հանդի Արարք  
եկեղեցւոյ հրապարակը : Սոցա կեղրոնն է  
Խ ա չ փ ո Ղ ո յ , ուր երկու գլխաւոր փո-  
ղոցները խաչաձև իրար կտրելով կ'անցնին :

Այս չորս բաժանմանց արեւելեան հա-  
րաւային մասի մէջ կը պարունակի Արարք և  
Նորաչէն եկեղեցւոյ թաղերը :

Արեւելեան հիւսիսային բաժնի մէջ՝ Յան-  
կոյսներ և Նորչէն թաղերը :

Արեւմտեան հիւսիսային բաժնի մէջ՝ Ս .  
Յակոբայ և Փշով փողոց ըսուած թաղերը :

Արեւմտեան հարաւային մասի մէջ կան  
երկրորդական թաղեր, ստանց գլխաւոր  
բաժանման եւ անուան : Սոցա հարաւակողմ

կիյնայ Այգեատանեայց Բ. մասը՝ կլոր դար  
և Շամիրամայ թաղ , որք Այգեատանէն կը  
բաժնուին Հայկավանքէն մինչ Արարք ձգո-  
ւած ընդարձակ փողոցովք :

3—Այգեատանեայց մէջ հինգ եկեղեցի-  
ներ կան՝ Ա. Արարուց , Բ. Նորաշէնու , Գ.  
Յանկոյսձորոյ , Դ. Հայկավանից Սուրբ Աս-  
տուածածին եկեղեցիներ , Ե. Սուրբ Յակոբ  
եկեղեցին :


Այս եկեղեցիները ունին մի մի ծխային  
վարժարաններ , մի կամ երկու ծաղկոյններով .  
բացի սոցանէ՝ կայ մի կեդրոնական , երկու  
ընկերային և մի օրիորդաց վարժարան :

Այգեատանեայց մզկիթներ թուով քիչ  
են և աննշան , բազդատմամբ քաղաքամի-  
ջի հոյակապ մզկիթներուն : Ասոնցմէ մի քա-  
նիս ունին թաղային վարժարաներ :

4—Այգեատանեայց գլխաւոր հրապա-  
րակներն են՝ Ա. Արարք . ուր հարիւրի  
չափ առեւտուրի կրպակներ կան , սորա հը-  
րապարակը կիրակնօրեայ վաճառատեղի է  
այգեատանցուց և շրջակայ գիւղացիներու  
համար : Բ. Խ ա չ փ ո Ղ ո Յ ուր մի քանի  
կրպակներ կան :

4368

ԱԵԳԵՍԵՆԵՍՈՅ ՅՍՏԱՆԿԻԹ



- 1. Սուրբ Յակոբ . 2. Յանկոյսձոր . 3. Նորաշէն . 4. Արարք .
- 5. Հայկավանք եկեղեցիներ . 6. Խաչ փողոց .

Հատարակայ զբուստեղի կը համարուին՝ մեծ և փոքր ֆէնտրէն, Պոզուա տի դար, Աւօրի դար. ուր շրջա- րաններ և վազող շուրեր կան :

1 — Այգեհարանը քաղտակէն ո՞ր կողմերու վրայ կ'իջնայ : Ո՞րչափ է դարձած-նիւնը : Ի՞նչ տեղեր ունի : Որո՞նք են նորա բլուրներ և յորակներ :

2 — Այգեհարան քանի՞ մասերու կը բաժնուի : Ո՞րն է բուն այգեհարանը : Սա ի՞նչն ունի : Որո՞նք են բլ- րատու փողոցներ և ո՞ր կողմերու վրայ դարձած-նա՞ծ : Ի՞նչն ունի : Ո՞ր տեղ է Խաչ փողոց : Սորա շրջ- ակերտ վրայ ի՞նչ խողեր և բաժանումներ կան : Ի՞նչ անուն ունի : Այգեհարանեայց երկու մասերը ի՞նչ փող- ցով կը բաժնուին իրարէ : Որո՞նք են հայաբնակ և որո՞նք դարձկաբնակ խողեր : Սոքա այգեհարանեայց ո՞ր մասերու Վճ կ'իջնան :

3 — Այգեհարանեայց Վճ քանի՞ եկեղեցիներ կան . Բեր ո՞ր կողմերու վրայ կ'իջնան : Ի՞նչ անուն ունին : Քանի՞ խողային վարժարաններ կան : Ո՞րն է սորբ Մարկոսեան, Մարկեոսեան, Արհաբեան վարժարաններ : Ո՞ր տեղ է Կերտնական, Ինճապար ընկերութեան Հայկազեան և Սանդիսեան վարժարաններ : Ո՞ր են դարձկայ ճակիներ և վարժարաններ : Ո՞ր կողմերու վրայ, ո՞ր խողերու Վճ : Ո՞ր տեղ է Բաղանի :

4 — Ի՞նչ գլխաւոր հրապարակներ, վաճառարեղեր և սրճարաններ կան, և ո՞ր կողմերու վրայ կ'իջնան :

Ը — ՎԱՆ ԲԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱՅ ԱՅԳԻՆԵՐ ԵՒ ՊՏՂԱԲԵՆՈՒԹԻՒՆ .

1 — Եթէ քաղաքի եւ այգեհարանեայց կեդրոնէն դուրս ելնեք, մի ժամ հեռաւորութեամբ դէպի հիւսիս կը տեսնենք՝ Աւանց, Ղէզկ եւ Շահպաղի գիւղերու ընդարձակ այգիներ : Նոյնչափ հեռաւորութեամբ դէպ Արեւելք Սղկայ, Շուշանց և Կուռուպաշ գիւղերու այգիներ : Իսկ ժամ ու կէս հեռաւորութեամբ դիպի հարաւ՝ Ծվստան և Արտամետ գիւղի ամենամեծ ծառաստան, տարածուած վանայ ծովի արեւելեան ափի վրայ ամենադեղեցիկ տեսարանով : Սոքա քաղաքի եւ այգեհարանեայց մի մի մաս կամ նորա Արուարձաններն են :

2 — Այգեհարանեայց մէջ նշանաւոր են՝ Շամիրամայ թաղի այգիներ ուր շուրն առատ և արդիւնաբեր է : Մասնաւորապէս կը գովէին երբեմն այգեհարանեայց Նորատուսի կ'իջուած մասը՝ այլ այժմ օր աւուր աւերման ենթակայ :

Քաղաքի արուարձանայ մէջ ամենաուշին կը համարուի Արտամետ գիւղի ծառաստաններ, ուր նշանաւոր է կարմիր Տաւաւ .

լի խնձոր, կեռասն և ընկոյզ: Հիւսիսային մասի մէջ Աւանց և Շահպաղի գիւղի այգիներ, յորս պատուական է դեղձն ու խաղող իւր ընտիր գինիովն:

3 — Վանայ այգիներու պտուղները խիստ բազմատեսակ են ուստի և դժուար է մարդոյ՝ նոցա թիւն և զանազանութիւնը գտնել: Այս պտուղները ընդհանրապէս երեք մասերու կը բաժնուին, Գարնան աստուած, Ամառն աստուած, (ամռնուկ) Աշնան աստուած (աշնուկ), որք յիշեալ երեք եղանակաց մէջ հասնելուն համար նոյն անուամբ կը ճանչցուին:

Գարնանաստուած պտուղներու մէջ նշանաւոր են՝ Կեռասն, Կեռսիկ ալուէայ, Շուտաստուած ծիրան: Ամառան պտուղներն են՝ Տալասլի խնձոր, Թթու խնձոր, Կարմրաթուշ ծիրան, Դեղձ, Թթու տանձ, Դեղին և Տղտղեկ տանձեր: Իսկ աշնանաստուած պտուղներու մէջ՝ Տամոն, Կլաթ խնձոր, Մալաղի, Նուեկ, Մէրբեկ և Մալաչի տանձեր:

Խաղողներու մէջ նշանաւոր են՝ Խիզնայ

խաղող, Քիշմիշ խաղող, սպիտակ եւ կարմիր Այծու պտուղներ:

4 — Վանայ այգեստանեայց մէջ պտղատու ծառերէն իրատ կան նաև անպտուղ ծառեր, Ուռնի, Բարտի, Թեղի, Կաղամախի եւ Հացի, որք առհասարակ շինութեանց, երկրագործական եւ ուրիշ զանազան գործիներու և վառերու կը գործածուին: Իսկ ծաղկաբեր ծառերէն կան՝ Վարդի, Լէլաղի և Միւրվերի ծառեր:

1 — Քաղաքի և այգեստանեայց շրջապատ սարէշի՝ նշանաւոր են՝ աստուած, որ կողերու վրայ, որ կողերու վրայ, որ կողերու վրայ, որ կողերու վրայ:

2 — Ի՞նչեք արտաքին. որո՞նք են այգեստանեայց և արտաքինեայց նշանաւոր այգիներ. որ կողերու վրայ կ'ընեն. որ կողերու վրայ կ'ընեն:

3 — Վանայ այգիներ ի՞նչ պտուղներ ունին. որո՞նք են նշանաւորներ: Թուեցէ՛ գարնան, ամառն և աշնան պտուղներ՝ որք ծանօթ են յեղ:

4 — Այգեստանեայց և շրջակայ գիւղերու անպտուղ ծառեր որո՞նք են: Ի՞նչ բան է կը գործածուին նստաբանի՛ են: Թուեցէ՛ ծաղկաբեր ծառոց անուններ:

Թ — ՎԱՆ ՔԱՂԱՍԻԻ ԶՈՒՐԵՐԸ

1 — Վան քաղաքը իւր ամէն մասերու մէջ հաւասարապէս բնական վազող ջուրեր չունի, միայն քաղաքամէջ՝ առաւելապէս նորա արեւմտեան կողմ, բազմաթիւ աղբիւրներ և առատ վտակներ կան: Նշանաւոր են Բերդի ստորոտէն բղխած ջուրերը, որոնցմէ մի մաս ջրանցքն երոզվ պարսպից դուրս կը վազեն և երթալով ի ծով կը թափին: Մի մասն էլ տեղի հարթութեան պատճառաւ աստ անդ ժողուելով կը լճանան և ամարան մէջ օդի ապականութեան պատճառ կը լինին: Քաղաքամիջի ջուրերը քիչ բացառութեամբ դառնահամ և դժուարըմպելի են:

2 — Բոլոր այգեստանը զուրկ է բնական աղբիւրներէ, նորա մէջ վազող բազմաթիւ ջուրերը կը բղխեն վարազայ լեռան ստոր երկրեայ խաւերէն, զորս մարդիք ջրհորներով շինուած ա կանն երոզմէ վազողով, այգեստանեայց այլ և այլ թաղերէն դուրս բերած են: Այս աղբիւրները կանուանենք՝ Քեահրէզ, բղխած տեղերուն՝ քեահրէզի ա կը, ջրոյ վազած տեղին

առուն, նորա աջ և ձախ կողմերուն՝ առուն ափունք կամ եղբրք: Իսկ ջրոյ ժողոված տեղին՝ աւազան (հաւուզ):

Այգեստանեայց քեահրէզներ թուով 20 հասնեն, որոցմէ եօթը՝ Յանկոյսճորոյ թաղի մէջ: Հինգը՝ Նորաշէնու, երեքը՝ Արարուց, չորսը՝ Կրորդարայ և մին՝ Սուրբ Յակոբայ բաժնի մէջն են:

Թուեցե՛ք այս աղբիւրները, ասացե՛ք ի՞նչ նշանակուած են, այգեստանեայց ո՞ր թաղն և բաժնի մէջն են բռնին:

3 — Վանայ ջուրեր միայն ասոնք չեն, վարազայ լեռան երկու թեւերէն բաւական առատ ջուրեր կը վազեն և միանալով կը կազմեն գետահներ, որոցմէ մին՝ Յանկոյսներու ձորակէն (յանկոյսճորոյ գետ) և միւսը՝ Կուռուսլազ գիւղի առջևէն (կուռուսլազայ գետ) վազելով ի ծով կը թափին: Գետի ի ծով թափած տեղին կըսուի՝ Գետաբերան: Եթէ երեսնիս գետի ջուրի վազած կողմ գարձնենք՝ մեր աջ կողմը գետի աջ կողմ և ձախը՝ գետի ձախ կողմ կանուանի:

Կայ և մի այլ ջուր՝ Շամիրամայ



Չ ու ը ր անուամբ , սա կը բղխի վանայ հա-  
րաւակողմ Սարպուլաք անուն լերան ստորո-  
տէն և իբր ութ ժամու հեռաւորութեամբ  
շինուած մի մեծագործ առուի մէջէ կողայ  
ռոռոգել վանայ հարաւակողմի դաշտը ,  
դիւղական ծառատունկներ և այգեստանայոյ  
համանուն թաղը՝ Շամիրամայ թաղ :

Վանայ արևելակողմ կան նաև փոքր լը-  
ճակներ՝ Սղկայու լիճ , Ֆառուղայ լիճ , Գէ-  
շիշ լիճ , ուր գարնան ջուրեր ժողուելով  
ամարան մէջ շրջակայ դաշտը և այգեհտան  
ռոռոգելու կը ծառայեն :

Գարնան ջուրերու հետ երբեմն առատ  
անձրևներ խառնուելով հ ե ղ ե ղ կը լինին :  
Սոքա իրենց ընթացից մէջ տեղ տեղ երկիրը  
( հող ) փորելով հ ե ղ ե ղ ա տ կը բանան :  
Երբեմն էլ բարձր տեղից ՚ի վայր թափելով  
ջր վ է ժ կը ձեւացնեն : Այսպիսի ջրվէժներ  
կը տեսնենք այգեստանը շրջապատող երե-  
սունէն աւելի ջրաղացներու քով :

4 — Վանայ արևմտակողմ քաղաքամի-  
ջից կէս ժամ հեռաւորութեամբ կը տեսնուի  
Վանայ լիճը , որոյ ընդարձակութեան  
պատճառաւ կըսուի նաև Վանայ ծ ո վ , սո-

րա վրայ կ'երթեւեկեն երկու հարիւրէն ա-  
ւելի նաւեր և նաւակներ : Ծովի այնտեղին  
ուր նաւեր դատար կ'առնուն կըսուի՝ Ն ա  
ւ ա հ ա ն դ ի ս տ : Վանայ ծովի նաւահան-  
գատի ցամաքը բլրածև բարձրացած և դէ-  
պի ծովը տարածուած է . ցամաքի այս մա-  
սին կըսուի՝ Գ լ ու խ կամ Հ ը ու ա ն դ ա ն :  
Երբ մի հրուանդան փոքր և ցամաքից քիչ  
վեր բարձրացած լինի կըսուի՝ Լ ե ղ ու :  
Ծովը տեղ տեղ ցամաքը քերելով ներս մտած  
և կազմած է ծ ո յ կամ ծ ո վ ա ծ ո յ :

Վան քաղաքի ծովափէն դէպ արև-  
մուտք և դէպի հարաւ՝ կը տեսնուի երկու  
փոքր ցամաքներ , ( Կտուց և Աղթամար )  
որոյ շուրջ ծովը պատած է : Այսպիսի ցա-  
մաքները կ'անուանենք Կ ղ զ ի : Երբ մի ցա-  
մաք միայն երեք կողմերէ ջրով պատած է  
և մի կողմ՝ ծովափին հետ միացած՝ կըսուի  
թ եր ա կ ղ զ ի :

5 — Վանայ ծովի ջուրը դառն և աղի է ,  
այս ջուրէն կը պատրաստեն բ ո թ ա կ , մեր  
բնական օճառք : Այս բաղդատմամբ Վանայ  
ջուրեր աստիճանաբար իրարմէ կը զանազա-  
նին , որչափ արևմուտքէն դէպ արևելք  
բարձրանանք , ջուրերն էլ նոյն համեմատու-

Թեամբ քաղցր և ախորժեկէ կը լինին : Ամէ-  
նէն վճիտ և բարեհամ աղբիւրներ կը գտնու-  
ւին վարագայ լեռան շուրջ :

6 — Թուենք ջուրերու օգտակարութիւնը :  
Չուրը՝ մեր ամենակարեւոր սնունդն է , ոչ  
համ, ոչ հոտ և ոչ գոյն ունի :

Առանց ջրոյ կը ցամաքին բոլոր բոյսեր ,  
տունկ և կենդանիներ , կը լուսացունան ամէն  
անմաքրութիւնք :

Չուրը կ'օգնէ մեզ մեր շինութեանց , կը  
ուողէ մեր արտն և այգին , կը շիջուցանէ  
ամէն վնասաբեր հուր , հրդեհ : կը մաքրէ  
ապականեալ օդը : Չրով կը դառնան մեր  
ջրաղացներ :


Ծովի վրայ նաւեր երթեւեկելով , հեռու  
տեղերէ կը փոխադրեն՝ փայտ , ցորեան ,  
ածուխ , ուրիշ կարեւոր և զանազան պիտոյք :

Վանայ ծովը իւր մէջ կը սնուցանէ ա-  
ռատ ձկներ ( տառեխ ) զորս գարնան Ժամա-  
նակ որսալով կ'ուտենք :

Չուրը այս օգտակարութեանց հետ ունի  
իւր վնասներն էլ , կը ողորդէ շատ անգամ մեր  
գաշտն և արտեր , կամ 'ի ծովու այլեկոծելոյ՝  
կ'ընկղմէ նաւն և մարդիք :

ՆԱԳԱՍՄԸ ՎՔԱՆՆԻՍԻՍ ԳՈՒՄ

ՍՈՒՍԻՎԷ



ՀԱՐԱԻ

Վ Ա Ն Ա Յ Ծ Ո Վ

ԱՐԵՒՄՈՒՏՔ

1 — Վանայ բնական լազաշ ջուրեր ո՞ր տեղերն են ։  
Քաղաքապետ ջուրեր առելն ո՞ր կողմէ ջրայ կա գործարանն .  
որո՞նք են գլխաւորներն և ուսուցիչն իւրեանն ։

2 — Այգեհորանը բնական լազաշ ջուր ունի՞ : Ո՞ր  
տեղին կը բռնեն նորա աղբերներն , ո՞ր լեռներն  
որո՞րս կ'ելլեն , ի՞նչ անոտն ունին և ասի՞ գար են ։  
Ի՞նչէ ոկը , առաւ , ասի և եղբր ։

3 — Վան տաղաւթ շրջակայտ ուրիշ ի՞նչ ջուրեր կան .  
որո՞նք են նորա գետերն , ո՞ր կողմերն կը ջուրն . ո՞ր  
կը լեռնին . Գետաբերան որո՞նք կան . Գետի ոկ և  
յտի կողմեր ո՞ր կողմերն են . ի՞նչպէս կ'որոշուին ։ Ո՞րնէ  
Շապուրայ ջուր , ուսուցիչ կուգայ , որչա՞օք հետաւորու-  
թեամբ , այգեհորանեայց ո՞ր մասը կը ջրէ և ո՞ր կը լե-  
ռնի ։ Որո՞նք են Վանայ լեռներն , ո՞ր կողմերու ջրայ ,  
ինչէ հեղեղ , հեղեղադ , ջրվեժ ։

4 — Վանայ լե՛ճ կամ ծով , լանայ ո՞ր կողմ կ'ենայ ։  
Ի՞նչ է նա , նաւահանգիստ , հրսանքան , լեզու , ծոց  
կամ ծովածոց ։ Ո՞ր ցամաթն կ'ըստի կը շէ , թերակը շէ ։

5 — Վանայ ծովէ ջուրն ի՞նչպէս է , ուսուցիչն կը  
պարտադրուի բարակ ։ Վանայ տաղցրահամ աղբերներն ո՞ր  
կողմէ կամ լեռան ջրայ կը գործարանն ։

6 — Ջուրը ի՞նչ օգտակարութիւններ և վնասներ ունի  
Ծովէ ջրայն նաւերն ի՞նչ կ'արեւոր դեղայտ կը գործարանն  
շրջակայ գաւառներն ի՞ վան ։

Ժ — Օր , ԳԼԽԱԻՈՐ ՕՂԵՐԵԻՈՅԹՆԵՐ ,  
ՎԱՆԱՅ ՎԼԽԱՆ .

1 — Երբ մի հով ժամանակ սենեակի դռ-  
նէն դուրս ելնենք , մեր երեսը կը հովահա-  
րէ մի անտեսանելի մարմին օդը ։ Սա շրջա-  
պատած է բոլոր աշխարհ ։ Մենք ամէն  
վայրկեան կը շնջենք զայն , կ'զգանք նորա  
չարժումը , կը լսենք նորա շաղխն՝ բայց չենք  
տեսներ , որովհետեւ ն ու ը բ եւ թ ա  
փ ա ն ց ի կ է ։

Օդը ամէն տեղ եւ ամէն ժամանակ մի և  
նոյն չէ . տարուան չորս եղանակներուն՝ Գ ա  
ր ու ն , Ա մ ա ու , Ա շ ու ն եւ Չ մ ե ո  
միշտ կը փոփոխի , երբեմն տ ա ք , երբեմն  
ց ու ը ա , շ ո ը , խ ո ն աւ , երբեմն էլ  
հ ա ն դ ա ը ա կամ ա ը ա դ շարժումներ  
ունի ։ Օդի այս տարեկան փոփոխութեանց ,  
չարժմանց կ'ըսուի՝ Օդի փ ո փ ո լ ո լ թ իւ ն ,  
փ ո փ ո լ ո լ մ ա ն ա ս տ ի ճ ա ն կամ կ ը -  
լ ի մ ա յ ։

Օդի փոփոխութիւնք յառաջ կուգան  
Արեւի երեւոյթական շարժումներէն ։ Արեւի  
օրական և տարեկան շարժումը յառաջ կու-  
գան առօրին ինչպէս նաեւ չորս եղանակաց

ցուրտն և տաքութիւնք : Մենք կը տեսնենք որ Արեւը որչափ 'ի վեր բարձրանայ' համեմատաբար կը բարձրանայ նաև ջերմութեան աստիճանը և որչափ 'ի վար խոնարհի' համեմատաբար կը խոնարհի նաև ջերմութիւնք :

Ջերմութեան աստիճանները կը չափուին ջերմաչափ գործիքով : Սա մի ապակեայ խողովակ է , վարի կողմը սն դիկ (ժիլա) դըբուած , խողովակի բարձրութիւնն էլ աստիճաններու բաժնուած : Մեզիկը տաքութեամբ կ'ընդարձակի , կը բարձրանայ , իսկ երբ ցուրտ լինի կ'ամփոփի , կ'իջնայ :

Աշխարհի վրայ ամէն մարմիններ այս յատկութիւն ունին : Կան մարմիններ որք այս յատկութեամբ ոչ միայն կ'ընդարձակին , այլ և գոլորշի կը դառնան : Եթէ մի աման ջուր Արևին առաջ դնենք , կամ զայն հրով տաքցնենք , կ'սկսի հետզհետէ գոլորշիանալ :

2 — Երկրի վրայ գտնուած այսպիսի մարմիններ և անոնք իսկ որ ամենափոքր խոնաութիւն ունին իրենց մէջ (մարդ , կենդանի , բոյս և ծառ) : Արևի ջերմութեամբ ամէն օր գոլորշի կ'արձակին օդին մէջ : Այս գոլորշիներն են որ թանձրանալով երբեմն երկրի երեսը կը տարածին և օդը կը սղտորեն ,

այնպէս որ մեր շրջապատի առարկաներն իսկ չենք տեսներ : Այս երևոյթք կ'անուանի՝ Մ է գ կամ Մ առ ա խ ու զ :

Գոլորշիները ձգողական զօրութիւն ունենալով՝ հետզհետէ զիրար կը քաշեն , կը միանան և դիչերուան ցրտութենէն աւելի խտանալով երկրի երեսը կը սփռեն մի թացութիւն որ Յ օ Ղ կ'ըսուի : Աւելի ցուրտ դիչերներ երկրի վրայից օդը սառելով սպիտակ փոշի պէս կ'երևի Ղ ո Ր Ե Ղ Ե ա մ կ'անուանենք :

Երկրէս ելած գոլորշիները երբ աւելի բարձրանան և իրարու հետ միանալով թանձրանան՝ կ'ըսուին՝ Ա մ պ : Ամպ և մէգ մի եւ նոյն է այս տարբերութեամբ որ ամպը վերք բարձրութեան մէջ , իսկ մէգը երկրի վրայ կը տարածուի :

Երբ ամպեր վերի ցրտութենէն խտանան և ուրիշ գոլորշիներ էլ իրենց հետ միանալով թանձրանան , ծանրանան , չք կրնալով այլ եւս զիրար բռնել կ'սկսին կաթիլ կաթիլ վար թափիլ , որուն Ա ն ձ Ր Ե Լ կ'ասենք :

Անձրեւած ժամանակ եթէ օդը ցուրտ լինի նորա կաթիլները սառելով կը լինին Ձ ի Լ ն եւ իրարու հետ միացած զանազան

ձեռով վար կ'իջնան : Իսկ երբ աւելի սառին  
և հակառակ կողմերէ փչած հովերու հանդի-  
պելով վար իջնան՝ կը ձեւանան Կ ա Ր Կ ու տ :

Արևի լոյսը երբ մի անկիւնաւոր ապակիի  
վրայ զարնելով դուրս անցնի , նորա ճառա-  
գայթններու մէջ եօթն տարբեր գոյներ կը  
տեսնենք , կարմիր , նարնջի գոյն , դեղին ,  
բայ կապոյտ , մութ կապոյտ եւ մանիչակա-  
գոյն : Այս ճառագայթները երբ անձրեւի  
կաթիլներու վրայ զարնեն , երկնից երես  
կ'երևուի մի գունաւոր մեծ կամար , որ Մ ի -  
ա ծ ա ն կամ ծ ի ը ա ն ի դ օ տ ի կ'ըսուի  
եւ որ մենք Ա ն ա ն ա կ կ'անուանենք :

Անպերու մէջ շատ անգամ որոտումներ  
կը լսենք , սոքա ելեքտրական հեղուկներ են,  
որոնք իրարու հաղորդուելով ձայն , կրակ , և  
լոյս կ'արձակեն : Չայնին՝ Ո Ր ռ տ ու մ , լոյ-  
սին՝ Փ ա յ Լ ա կ , իսկ կրակին՝ Կ ա յ ծ ա կ  
կ'անուանենք : Ելեքտրականութիւն ունեցող  
շատ մարմիններ կան , որոնք մի եւ նոյն  
արդիւնքը կ'արտադրեն : Եթէ մութ ժամա-  
նակ մի սեւ կատուի մազերը շփենք , նորա  
վրայ յայտնապէս կը լսուին ճայթմունք եւ  
կ'երևուին կայծեր :

3 — Երբ մի տեղի օդը տաքնալով ա.  
նօսրանայ , տարածուի և ցրտանալով ամփո-  
փի , խտանայ , շարժում յառաջ կը բերէ , ո-  
րուն Հ ո վ կամ Հ ո Ղ մ (քամի) կ'ըսուի : Սո-  
քա երբեմն աւելի մեծ և արագ փչելով  
Մ Ր Ր ի կ կը դառնան : Մըրիկները երբեմն  
երկու հակառակ կողմերէ իրարու հանդիպե-  
լով կը բոլորեն և ամպերը սիւնաձեւ ՚ի վայր  
կ'իջեցնեն : Այս երևոյթը կ'անուանենք Թ ա ո :

Աշխարհի զանազան կողմերէ փչած հո-  
վերուն նայելով երկու գլխաւոր կարգի կը  
բաժնուին՝ Կ ա ն ո ն աւոր և Ա ն կ ա ն ո ն  
կամ Փ ո փ ո խ ա կ ա ն : Կանոնաւոր այն հո-  
վերն են որոնք միշտ մի և նոյն կողմերէ կը  
փչեն և որոշեալ ժամեր ունին : Իսկ անկա-  
նոններ՝ զանազան և պատահական են : Հո-  
վերը երկրի և մաշդոց նկատմամբ մեծ օ-  
գուտներ ունին , առաւելապէս օդը կը մաք-  
րեն , կը չափաւորեն ամառան տ ա ք բ եւ  
ձմերան ց ու ը տ ք : Բայց կան հովեր էլ  
որք մերթ ընդ մերթ փչելով աղետաբեր և  
մահաբեր կը լինին :

4 — Վանայ մէջ փչած հովերուն նայելով  
զարնան եւ ամառան եղանակներուն կանոն-

նաւոր են . քիչ բացառութեամբ : Փոփոխա-  
կան են աշնան եւ առաւել ձմերան հովերը :

Վանայ կանոնաւոր հովեր Արշալոյսէն  
մինչ կէս օր եւ Վերջնալոյսէն մինչ  
Կէս գիշեր՝ կը փչեն արեւելքէն դէպ  
արեւմուտք : Կէս օրէն մինչ Երեկոյ  
եւ Կէս գիշերէն մինչ Առաւօտ՝  
արեւմուտքէն դէպ արեւելք :

Գարնան եւ աշնան եղանակին առա-  
ւել հունձքի ժամանակ կը փչէ երբեմն Ա-  
րևելեան հարաւային կողմէն Վանայ նկատ-  
մամբ մի վնասաբեր հով (աջմու քամին), որ  
գարնան մէջ նորարոյս ծիլեր, տերեւներ,  
խակ աշնան՝ հունձք եւ երկրի այլ եւ այլ պտ-  
ղաբերութիւնք կը չորացնէ :

Մի եւ նոյն ժամանակ, այս վնասաբեր  
հովը արեւմտեան դաւառաց (Գալբերունիք,  
Բզնունիք) եւ մի քանի գիւղերու համար  
(Ախմ, Զարանց, Էրմանց) արդիւնաբեր է,  
ուր փոխանակ չորացնելու առատ ցօղը սփ-  
ռելով դաշտը եւ արտօրայք կը ոռոգէ, յոր-  
մէհետէ տեղացիք բարւոք պտղաբերու-  
թեան կ'սպասեն :

Վանայ ձմերան եղանակի հովերը կը  
փչեն Հիւսիսային եւ Հարաւային մերթ եւս

Արևելեան Հարաւային կողմերէն : Հիւսիսա-  
յին հովերը ցուրտ են, իսկ հարաւային՝ տաք  
և հալեցուցիչ : Կայ եւ մի այլ վնասաբեր Հա-  
րաւային տաք քամի Խորշակ (սամ) կո-  
չուած որ կը փչէ ամարան մէջ եւ ծառոց դե-  
ռահաս պտուղները խարշելով վար կը թափէ :

1 — Աշեարհ ինչով է շրջապարսած . Ինչ է օր-  
և Ինչ, ցարկոսիւններ ունի, Որո՞նք են պարսան ե-  
ղանակներ և Կանչ : Ինչ է օրի փոփոխութիւնք, օրը  
Ե՞րբ կը պահայ և ե՞րբ կը ցրտի : Ինչ է ջերմութիւն : Ո-  
րո՞նք են ճարճոց ցարկոսիւններ, Ինչ կը Լինի երբ օր-  
ճարճոց պահայ կամ արտի :

2 — Ինչ է գուրշէ, ուստի՞ կը քոյանայ : Ինչ է օրի  
ճարտարաւոր, գուրշէներ 'ի վեր Բարձրանալով Ինչ կը Լի-  
նին : Ա՞յդեր ե՞րբ կ'անջրհեմ, որի՞ կ'ըստի ցօղ, եր-  
եամ, ե՞րբ անջրհե կանխելներ յեան և կարկոտ կը Լինին :

Արևի լայը Կանչի քոյն ունի և ո՞րքնք են : Ինչ է  
ձեռածան կամ ձերտնի բօտի, Ինչ յի ունի, որպարս՝  
ժոյլակ, կայծակ Ինչ պարսածաւտ ցառալ կոչան :

3 — Օրի շրթսմ Ինչ ցառալ կը Բերէ, Ինչ է  
հով ճրթի, Բախտ Ինչ Բանէ կը կաշմուտ, Ինչ յեռի  
Որո՞նք են կաննաար և անկանն հովեր, Ինչ օր-  
պարկոսիւն և վնասներ ունին :

4 — Վանայ կաննաար հովերը ո՞ր կողմերէն կը Ժը-  
լին : Թո՞տեղէ և նոց ժամանակներու անանները : Ո՞ր եղա-  
նակներուն Վանայ հովերը փոփոխան են : Ա՛յնու Կանչի

ո՞ր կողմէն կը գնէ և է՞նչ վնասներ կուտայ, այս բանին  
 ո՞ր պեղեցուն համար արդիւնաւոր է : Ձերբան զի վա-  
 շայ հովերը ո՞ր կողմէն կը գնեն, ո՞ր կողմէն կը գնէ  
 դատ և ո՞ր ցուրտ հովեր : Խորշի (սոս) կուտան բա-  
 ժն ո՞ր կողմէն կուգայ, ո՞ր եղանակէն զի, է՞նչ վնաս-  
 ներ կուտայ :

ԺԱ . ԵՐԿԻՆՔ . ԱՐԵԻ . ԼՈՒՍԻՆ . ԱՍՏՂԵՐ .

1 — Եթէ ելնենք մի ընդարձակ դաշտ  
 և կամ բարձրանանք մի բլուրի վրայ, կը  
 տեսնենք որ երկինքը կամարած և երկիրս  
 ծածկած և հեռաւոր լեռներու մօտ իւր  
 ծայրերը ամէն կողմէ մինչև երկիր հասած է :  
 Երկինքէն մինչ երկիրը մօտեցած տեղին կը-  
 սուի տեսանելի շրջան կամ հորի-  
 դոն՝ մի տեղի հորիզոն կրնայ աւելի հեռա-  
 նալ, ընդարձակիլ երբ աւելի բարձր՝ օրի-  
 նակ վարագայ լերան գլուխ ելնենք :

Վան քաղաքի և այգեստանեայց արևել-  
 եան հորիզոնէ՝ վարագայ լերան կատարը  
 (ծայր) : Արևմտեանը՝ Վանայ ծովի արևմտ-  
 եան ափի վրայ բարձրացող Նէմրութ և Գր-  
 դուռ լեռներու կատարը : Հիւսիսէն Չըմզըմ  
 մաղարայի, Ակուբի գիւղի, Շահպաղի և  
 Լէզկ գիւղերու քարաբլրոց ծայրեր, իսկ

հարաւէն սուրբ Խաչի բլրոց և Արտուս լե-  
 րան կատարներ :

2 — Մենք ամէն օր կը տեսնենք որ Ա-  
 րևել՝ արևելքի հորիզոնից կ'ելլէ՝ կը ծագի և  
 արևմտեան հորիզոնի վրայ ՚ի մայր կը մտնէ,  
 կը ծածկուի մեզնից :

Արևի այս երևոյթական շարժումէն յա-  
 ռաջ կուգայ գիշեր և ցորեկ, որք ՚ի մի-  
 ասին կը կազմեն մի օր կամ քսան և չորս  
 ժամ : Երբ գիշերուայ մթութիւնը հետզհե-  
 տէ լուսանալ կ'սկսի, արևելեան կողմ կը տես-  
 նենք մի սլայծառ ասող՝ Լ ու ս ո յ ա ս տ ղ  
 (Արուսակ) : Օրուան այս ժամուն կ'ըսուի՝ Ա ը-  
 շ ա լ ո յ ս կամ Ա ո ա լ օ տ :

Արշալոյսից քիչ յետոյ Արևի ճառա-  
 գայթններ կ'սկսին երկնից երես տարածուիլ  
 և կարմրագոյն ներկել զայն . այս երևոյթին  
 կը յաջորդէ Ա ը ա ծ ա գ . Արևածագէն  
 յետոյ Արևը ժամէ ժամ իվեր բարձրանալով  
 կէս օրին իւր ամենաբարձր կէտ կը հասնի,  
 և անտի հետզհետէ ՚ի վայր խոնարհելով՝ երե-  
 կոյեան ՚ի մայր կը մտնէ : Արևի ծածկուած  
 ժամանակ նորա ճառագայթները երկնից ե-  
 րեսը կարմրագոյն ներկելով՝ ժամէ ժամ կ'ամ-  
 փովին : Օրուան այս ժամը Վ ե ը շ ն ա լ ո յ ս ն

է, յորմէ հետէ կ'սկսին երկնակամարին վրայ  
բազմաթիւ աստղեր փայլիլ :

Եթէ ամարան մի պայծառ երեկոյ երկ-  
նից երես նայենք, կը տեսնենք որ աստղերը  
զանազան մեծութիւն, դիրք և երևոյթ ու-  
նին. 'ինոցանէ շատեր 'ի մի խմբուելով մի ձև  
կամ մի առարկոյ կը պատկերացնեն, ուստի  
և նոյն առարկայի անուամբ կը ճանչցուին :  
'ի հիւսիսակողմ կան եօթն պայծառ աստղեր,  
որոնք հետևեալ ձևը ունենալուն՝ մեր երկ-  
րագործներէն կ'անուանի դուլթան (Մեծ արջ):



Վերէ երեք աստղերը գոթնի է շն է, փն՝ յե-  
է շն, փն՝ Տ Կ, վերէ երկուսը 'ի Կ Կ և Կ Կ Կ Կ :

Գուլթանի հանդէպ հարաւային արևմտա-  
կողմ, կան նոյնպէս եօթն պայծառ աստ-  
ղեր, որոցմէ չորսը մի քառանկիւն ձև ու-  
նին, երեքն էլ նոցա կեդրոնը հաւասար հե-  
ռաւորութեամբ և մեծութեամբ : Սոքա 'ի  
միասին կը կազմեն մի աստղապատկեր :

Հ ա յ կ անուն, ըստ ռամկաց Խ Ե ք ե ր  
( Հայկայ աստղ ) : կեդրոնի երեք աստղե-  
րուն՝ Հայկայ դ ա լ ա զ ա ն : Գաւազանի  
վարի կողմէն վարսի ձեւով կախուած փոքր  
աստղերուն էլ Հայկայ Ս ու ր :



Ամենուն ծանօթ են այն խումբ աստ-  
ղերը, որք երեկոյեան դէմ յարեւմուտս եւ  
առաւօտը յարեւելս կ'երեւին, արշալոյս է  
յառաջ, զորս կ'անուանենք Բ ա զ ու մ ք  
( բազմաստեղք ) :

Աւելի որոշ կ'երեւին \*  
Կոստանդիանոսի Խ ա չ ք \* \*  
եւ Ե օ Թ ն ա խ պ օ ր \*  
Ս ե Ղ ա ն ք, \* \* Սոքա 'ի հնումն  
եօթն կըստ \* \* ընծ եզբայրներ  
էին, որք \* \* իրենց կրօնի  
և Հ ա յ ր ե ն ե ա ց համար նահատակուե-  
լով յետ միմեանց երկնակամարին երեք 'ի  
շարս աստեղց բողբոջան :



Ո՞վ չը ճանաչեր այն բազմաթիւ , անթիւ  
աստղերը , որք հազիւ ուրեմն կը նշմարո-  
ւին եւ հիւսիսոց մինչ հարաւակողմը սիւռե-  
լով աստղերէն տարբեր ձեւով կ'երեւին : Սոքա  
կ'անուանենք Յ արդ գ ո ղ ( Յիր կաթին ) :

Կան և մի տեսակ աստղեր , որք ժա-  
մանակ առ ժամանակ կ'երեւին և միւսներէն  
տարբեր երկար եւ լուսաւոր գէս ունին : սո-  
քա կը կոչուին Գ ի ս աւ ո թ ր աստղ ( պոչով  
աստղ )

Այլ քան զամէն լուսաւոր եւ փառաւոր  
Լ ու ս ի ն ն է , որ գիշերուայ մթութիւնը  
Արեւի պէս կը փարատէ , երբեմն մեծ եւ  
երբեմն փոքր կ'երեւի , կը ծնի , կը մանկա-  
նայ , երիտասարդութիւն և ծերութիւն ունի :  
Լուսնոյ այս փոփոխութեան կ'ըսուի Լ ու ս -  
ն եր եւ ո յ թ , որ ունի՝ ծնունդ , առաջին  
քառորդ , բոլորում և վերջին քառորդ :

1 — Տեսնելէ շրջան կամ հորեղան որո՞ն կ'ըսուի :  
Որո՞նք են վանոյ արեւելեան , արեւմտեան , հիւսիսային  
և հարաւային հորեղաններ :

2 — Գեշեր և ցրեկ սասի՞ յառաջ կոչուի , թե՞ օր  
տան՞ թան՞ , օրուան ո՞ր ժամանակ Արշալոյս , Արեւծագ  
կ'ըսեն : Ո՞րն է Լուսնոյ աստղը ( Արտասիւն ) : Կե-  
օր , վերջնալոյս և կե- քեշեր ե՞ք ինչ կ'են :

3 — Ի հիւսիսային մէջ ի՞նչ ծանօթ աստղեր կան :  
Գուրան ի՞նչ յե ունի . Կանի՞ աստղեր են : Հայկոյ աս-  
տղը Կանի՞ աստղերէ կը կոչուի և ի՞նչ յե ունի ,  
որն է Հայկոյ Գուրանը , սաբը : Ուղղութ ո՞ր ժամա-  
նակներ կ'երեւի մէջ : Ո՞ր կոչուի Կասարանդիանոյն Խաչը  
և եօրն արեւոյ Աեղանը , ի՞նչ յե ունին այն աստղերը :  
Գծեցե՛ք յեւ ծանօթ աստղերը յեր թղթի կամ քրտաթի-  
րակէ վրայ : Ո՞ր աստղերուն Յարբէրը լըսուի : Գիւս-  
արները ի՞նչ կը արբէրեն մաս աստղերէն :

4 — Լուսին ի՞նչ երեւոյթներ ունի , Կանի՞ օրէն կը  
կարարէ եւր շրջանը : Ե՞րբ է Լուսնոյ ծնունդը Ար-  
ջին Կասարդ , Բաւրոս և վերջին Կասարդը :

ՅԲ — ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԵՒ ՆՈՅՍ  
ՊԱՐԱՊՄՈՒՆԵՐ :

1 — Վանք Հայաստանի ամենահին քաղաք-  
ներէն է . Ասորեստանեայց Շամիրամ թա-  
գուհին զայն մեծադործութեամբ զարդարե-  
լուն համար՝ իւր անուամբ Շ ա մ ի ր ա մ ա -  
կ եր տ կամ Շ ա մ ի ր ա մ ա յ ք ա ղ ա ք  
ըսուեցաւ : Յետոյ Հայկազանց իշխանութեան  
ժամանակ թերեւս Վ ա ն թագաւոր զայն  
վերստին շինելուն կամ նորոգելուն համար  
կոչուեցաւ Վ ա ն :

Վան քաղաքը Տ ո ս պ գաւառի զլխա-  
ւոր քաղաքն է , սորա մէջ կը նստէին եր-

բեմն Արծրունի իշխաններ և թագաւորներ, զանազան ժամանակ մեծամեծ պատերազմներ եղած է այս քաղաքի վրայ: Սա երբեմն թաթարաց, Յունաց եւ Պարսից իշխանութեան տակը ինկաւ, 500 տարի է ի վեր Օսմանեան կառավարութիւնը այս քաղաքին եւ երկրին կը տիրէ: Սորա մէջ կը նստի այժմ վան նահանգի կուսակալը՝ որ յանուն վեհափառ Կայսեր Սուլթանի կը կառավարէ այս երկիրը, իւր ստորակարգեալ պաշտօնեայններով և ժողովներով: Գաւառաց մէջն էլ մի մի պաշտօնեայներ գրուած են ( գայմագամ, միւտիր ), երկրի խաղաղութեան եւ ապահովութեան հսկելու համար: Նահանգի հսկող մարմինն է՝ ոստիկան ու թիւն, որ իւր հրամանի ներքեւ ունի պաշտօնակալներ եւ ղինուորներ:

Վան քաղաքը կառավարական ( պաշտօնական ) և առեւտրական յարաբերութիւն ունի կոստանդնուպօլսոյ եւ գաւառաց ամէն գլխաւոր քաղաքաց հետ: Ամէն շաբթու կանոնաւորապէս կը հասնի՝ Կ. Պօլսոյ, Տրապիզոնի և Կարնոյ Սուրհանդակը ( փոսթա ): Կընդունի ամէն քաղաքներէ Հեռագրական լուրեր թէ Կառավարական եւ թէ

հասարակական գործոց նկատմամբ:

2 — Վան քաղաքի Հայոց Ազգային Իշխանութիւնը կը կազմուի երկու ժողովներէ՝ Կրօնական և Քաղաքական, որոց կը նախագահէ երկրին Առաջնորդը: Սոքա կ'ընտրուին Սահմանադրապէս գաւառի Երեսփոխանական ժողովէն:

Այս կրկին ժողովները ընտրած են՝ Գատատանական, Տնտեսական, Վանական եւ Ուսումնական խորհուրդներ, իբրեւ Ազգային իշխանութեան օժանդակ մարմիններ:

Կան նաև իւրաքանչիւր եկեղեցեաց մէջ մի մի թաղական խորհուրդներ, որք թաղի ժողովրդէն կ'ընտրուին քուէարկութեամբ, սոցա պաշտօնն է հսկել Եկեղեցւոյն և Դպրոցին, նոցա նիւթական պէտքերը մատակարարել, ինչպէս նաև թաղի մէջ ծագած վէճերը քննել և անոնց խաղաղարար լինել:

Քաղաքի եւ այգեստանեաց մէջ կազմուած են մի քանի բնկերութիւններ, որոնք զանազան միջոցներով կ'օգնեն ժողովրդի յառաջագիմութեան:

3 — վանայ մէջ քստ բաւականին ծաղկած և տարածուած է արհեստը, որոց գլխաւորներն են՝ Ոսկերչութիւն, Դերձակութիւն Դարբնութիւն, Կոշիակարութիւն, Ռստայնանկութիւն, Հիւանութիւն, Որմնագորութիւն և Պղնձագործութիւն: Կան յաջողակ փորագրիչներ, ֆանդակողներ, Բրուտ, Խոհարար Ներկարար, Խաղախորդ և ժողովրդեան պիտոյք մատակարարող ուրիշ այլ և այլ արհեստաւորներ:

Նշանաւոր է վանայ մէջ գործուած բնտիր Շ ա լ ե ր, Շատախու Հայ բնակչաց պիտանի դիւտը, որ շատ տեղեր ՚ի վաճառ կը տարուի: Վերջի տարիներ օր աւուր կը յառաջադիմէ՝ Ա ս ր ա գ ո ր ծ ու թ իւ ն, որոյ համար այժմ տասնէն աւելի գործարաններ բացուած են, ուր կը շինուին նաև ընտիր և դիմացկուն մանի սաներ:

Վան քաղաքի բնակչաց մեծագոյն մասը արհեստներով կը պարապին: Ի սոցանէ գլխաւորները աւելտրական յարաբերութիւն ունին Կ. Պօլսոյ հետ և անտի առաւելապէս բերել կուտան իրենց վաճառելի ապրանքներ: Այս ապրանաց գլխաւորներն են՝ ամիրիկան կտաւ, պասմայ, չուխայ, երկաթ,

պղինձ, կաշի և ուրիշ մանր և զանազան պիտոյք:

Օտար վաճառականներէն՝ առաւելապէս Պարսկաստանից ՚ի վաճառ կը բերուին՝ բամպակ, բրինձ, ընտիր շաշեր, գորգ (խալի), կտաւ, շիլայ և զանազան սերմեր:

Շրջակայ գաւառներէն կը բերուին՝ աղ, չամիչ, թուղ, նուռ, ընկոյզ, ցորեան, փայտածուխ, փարչ, (դորակ), ձուկ, բուրգ, մազ և ընտանի անասուններ:

Իսկ գիւղերէն՝ այլևայլ ձեռագործներ, վայրի բանջարներ, որպիսիք են՝ սուխուկ, պտուկ, երբժնակ, պողիկ, մանտակ, սիտակու բանջար, եղըճայ և շրեշտ:

Իսկ վան քաղաքից շրջակայ գիւղերու, գաւառներու և արտասահման երկիրներու մէջ ՚ի վաճառ կը տարուին, Վանայ շալ, չիթ, կտաւ, շիլայ, բորակ, խտիր, բուրգ, մազ, կաշի, պտուղներ և բանջարեղէններ:

Բնակչաց մի մասն էլ կը պարապին այգեգործութեամբ, պարտիզպանութեամբ և երկրագործութեամբ: Այգեգործներ զանազան պտուղներ և ընտիր գինի կը պատրաստեն: Պարտիզպանք տարուէ տարի կը սերմանեն՝ սոխ, կաղամբ, ճակնդեղ, սոնպ-

ղին, բողի, շողգամ, ոսպ, կլուլ (ոլուլն), բակլայ, անանուխ (նանէ), սպանախ, գինձ և ուրիշ զանազան բանջարներ և համեմներ:

Տուներու մէջ քաղաքացի հայ կանայք կը պարապին ասեղնագործութեամբ և այլ և այլ ձեռագործներով, որոցմէ մի մասը իրենց առտնին պիտոյից, մի մասն էլ ՚ի վաճառ կը համեն:

Այգեստանէն մինչ ՚ի քաղաք գնալու ճամբու վրայ հետզհետէ կը շատնան հասարակաց կառքերը, երթեւեկութեանց դիւրութիւն քննայելու համար: Բեռնակրութեան համար կը դործածուին ձիեր և էշեր. կան բեռնակիր կառքեր էլ:

4 — Վան քաղաք իւր արուարձաններով հանդերձ 40,000 բնակիչ ունի, որմէ 30,000 Հայ են եւ 10,000 Օսմանցի: Կան աննշան թուով ֆնչուններ էլ: Բնակչաց գործածական լեզուներն են Հայերէն և Տաճկերէն (տիրող շեղու) կրօննէ՝ ֆրիստոնէութիւն եւ Մահմետականութիւն:

Ի քաղաք եւ այգեստան բնակող քնտանեաց մէջ՝ հին ժամանակներէ շարունակաբար կուգան մի քանի երեւելի գերդաստան:

ներ: Բնակչաց գրէթէ Տրդ մասը գաղթականներ են, շրջակայ գաւառներէն, քաղաքներէն և Պարսկաստանէն եկած: Սորա ցարդ կը պահեն իրենց երկրի սովորութիւններ եւ յիշատակներ: Ի սոցանէ մեծագոյն մասը իրենց գաղթած քաղաքի և երկրի անուամբ կը ճանչցուին ակզացիներէն: ( Թուեցէ՛ք այս գաղթականաց և Վանայ երեւելի գերդաստանաց մականուները՝ որչափ ծանօթ են ձեզ ):

1 — Ինչո՞ւ Վան քաղաքն Շաֆրամիկերդ իշտուե՞ ո՛վ էր Շաֆրամ, ո՛վ էր Վան և Ինչո՞ւ էր անանո՞վ այս քաղաքը Վան քաղաքացի: Վան քաղաքը որ քառուի զին է: Հայոց ո՞ր խաբարներ կը նստին այստեղ: Երբ որբա՞ծ են Օսմանցիք այս քաղաքն: Ո՞վ է այժմ այս նահանգի կառավարը, ի՞նչ անան ունի. որո՞նք են քաղաքի գլխաւոր պաշտօնեայք: Ոսրիկանայինն ի՞նչ բանի կը հսկէ:

2 — Վանայ Սգբային իշխանութիւնը ի՞նչ ժողովներ ունի, ի՞նչ է նոցա անաններ, ո՞յք են նոցա անորայներ, ո՞վ է այժմ այն ժողովերու Նախագահ կամ Առաջնորդ: Սյս ժողովները որտե՞ր կ'ընդհան և ի՞նչ է իրատան իւրի պաշտօնը: Թաղական խորհուրդները որտե՞ր կ'ընդհան ո՞ր կը նստին և ի՞նչ պաշտօն ունին: Քանի՞ են Վանայ ընկերութիւնը և ի՞նչ անան ունին:

5 — Վանայ զեջ է՞նչ արհեստներ կան , որո՞նք են  
 քիւսաստաններ : Վանայ շալի ո՞ր հայ բնակչաց գործն է :  
 Մշտ՞ Վանայ զեջ է՞նչ գործարաններ կան : Բնակիչներ  
 քիւսաստաններն է՞նչ գործով կը պարսպեն : Տեղացիք է՞նչ  
 արհեստներ կը բերեն որո՞ք տաղաներն , օտարներն է՞նչ :  
 Երկուց , բաւարաններն և գիւղերն է՞նչ կը բերանին  
 վաճառելու : Վան տաղան է՞նչ վաճառք կը պարսպեն  
 շրջակայ բաւարաններ : Վանեցի կանայք է՞նչ գործով կը  
 պարսպեն : Երկուցիւն-ճիւղերն որո՞ք արհեստներն որո՞նք  
 են , է՞նչ անասուններ կը գործածուին բեռնակրող-խեան  
 համար :

4 — Վան տաղան ո՞րքա՞ք բնակիչ ունին , ո՞րքա՞ք  
 հայ են , որքե՞լ աշխատե՞լ են , է՞նչ լեզուով կը խօսին  
 ուրիշ լեզուներն : Բնակիչներն է՞նչ կրօն ունին : Վան  
 այ զեջ է՞նչ երկեւի բերդատուներ կան գաղթական  
 ներք որո՞նք են :

ՃԳ — ՎԱՆՍԵ ՇՐՉԱԿԱՅ ՎԱՆՔԵՐ , ԳԻՒՂԵՐ ,  
 ԳԻՒՂԱՅԻՆՑ ՊԱՐԱՊԱՐԱՆՔ , ԿԵՆԴԱՆԻՔ ԵՒ  
 ԹԻՉՈՒՆՆԵՐ .

1 — Վան քաղաքը իւր շրջակայ արուար-  
 ձաններով ( գիւղերով ) կը կանգնէ վասպու-  
 րական նահանգի վանաստուգաբանութիւնը :  
 Սահմաննէ Արեւելքէն՝ վարադայ լեռ , Հա-  
 րակէն՝ Երուանդուսիք ( Հայոց ձոր ) , Արեւ-

մուտքէն՝ վանայ ծովք , Հիւսիսէն՝ Ղեղկ եւ  
 Շահպաղի գիւղերու քարաբլուրներ : Այս  
 դաւառի գիրքը գաղտային է , ամառը զու-  
 ւարճալի եւ ձմեռը խիստ ջուրտ : Բաւական  
 մշակելի եւ արդիւնաբեր հողեր եւ հնձելի  
 մարգագետին ( խոտնոց ) ունի : Սահմանադը-  
 խի լեռանց եւ բլուրներու մէջ նշանաւոր է  
 վարադայ լեռք , որոյ վրայ ընդարձակ  
 արօտատեղեր , ձոր , հովիտ միշտ  
 վազող աղբիւրներ , վտակներ , 200 էն աւելի  
 դանազան հոտաւետ ծաղիկներ եւ  
 առատ բանջարներ կան : Սորա վրայ  
 է վերիսն վարագրք , Գալիլեան ,  
 Աստղկան բերդք :

2 — Այս լեռան հարաւային ստորոտ կիլի-  
 նայ վարագայ հռչակաւոր վանքք ,  
 ուր ի հունմե եօթն հոյակապ տաճարներ  
 կային , այլ այժմ երկուքք միայն կանգուն են :  
 Այս վանուց մէջ իրիմեան Հայ-  
 րիկք 1858 ամին ժառանգաւորայ վար-  
 ծարան , թանգարան և տպարան մի  
 հաստատեց , յորմէ Արծուի վասպու-  
 րական անուն ամսաթերթք կը հրատա-  
 րակէր : Սա Հայաստանի մէջ առաջին տպո-  
 րան եւ առաջին ամսաթերթն եղաւ :



3 — Գիւղերու մէջ երևեւի են՝

Ա.—Աւանց գիւղաքաղաքք, որ վանայ ծովու նաւահանգիստն է, ուր 100էն աւելի երթեւեկող նաւեր կան, զարգարուած բազմաթիւ այգիներով և ծառատունկներով: Այս տեղը կը շինուի բ որակ, խ ս ի բ: Վաճառատեղի է ց որ են ի, փ ա յ ա ի, ա ծ ու խ ի և զանազան պիտոյից: Այս գիւղը ճարտար նաւավարներ կան, բնակչաց մի մասն էլ երկրագործութեամբ և այգեգործութեամբ կը պարապին:

Բ.— Լէզկ կամ Արալէզ գիւղք, որոյ քովի բարձր քարաբլուրի վրայ կանգնեց Շամիրամ թագուհին իւր Արալէզ կուռքերը, որք զԱրայն լզեւով պիտի կենդանայնէին: Այժմ այն քարաբլրի վրայ կայ Ամենափրկչի մատուռ:

Գ.— Շահպաղի, պարսից մի շահի անուամբ կոչուած. նշանաւոր է սորա որթատունկ այգիներ և բնտիր գինին:

Դ.— Ակոբի, սորա արևելակողմ է Մհէրի գուռք և զվճարարան:

Ե.— Սղիայ, որոյ շուրջ շատ ջրաղացներ կան, այս գիւղացւոց ձմերան աշխատութիւն է խ ս ի բ գործել:

Զ.— Շուշանց, Արծրունեաց Սենեքերիմ թագաւորի Շուշանիկ գոտեր գիւղն է, սորա մէջն է իւր գերեզմանը:

Է.— Կուռուպաշ, սա բնդարձակ այգիներ և շատ ջրաղացներ ունի:

Ը.— Կենդանանց և Բերտակ գիւղեր, սոքա ջրաղացի և կապոյտ մի տեսակ բնտիր քարի քարահանք ունին: Գիւղացիքն էլ յաջողակ քարահատներ են:

Թ.— Երվստան և Արտամետ գիւղեր, անուանի են իրենց պողատու ծառատունկներով: Այս վերջինը շինեց Արշակունեաց Արտաշէս, և հաստատեց անդ իւր ամարանոցը:

Անոնցմէ ՚ի գատ կան և փոքր գիւղերը, Զրուանդանց, որ ծառատունկներ ունի: Զորովանց, Լամգկերտ, Պախէզիկ, Ֆառուղ, Ռսիկպակ, Տարուան գիւղ, Կողպանց, Տօնի և Սևակրակ գիւղեր:

Կ.— Վանայ Շրջակայ գիւղացիք կը պարապին գլխաւորապէս այգեգործութեամբ և երկրագործութեամբ: Այգեգործները ունին պողատու ծառեր և որթատունկ, որոնցմէ զանազան պտուղներ և բնտիր գինի կը հանեն:

Երկրագործ դասը ունի դաշտ և արօտա-

տեղի, Դաչտի մէջ կը մշակէ՝ ցորէն, գարի, տարեկան, կտաւատ, կորեակ և ուրիշ այլ և այլ արմտիք: Մշակելի խոտեր են՝ կորնկան, առուոյտ եւ դեղին առուոյտ: Սոքատարուան երկու եղանակներուն մէջ (աշուն և դաւրուն) սերմանուելուն համար, կ'ըսուին՝ աշնան աջան և դարնան աջան, որք կը լինին նաև ջրարբին և ոստին:

Երկրագործի վարող գործիքներն են՝ գութան և արօր: Առաջինով հերկուած արտերը կ'ըսուին գութանափար, իսկ արօրով հերկուածները՝ արօրափար: Քաղող գործիքներն են՝ մանգաղ և գերան դի: Երկրագործը կ'ունենայ նաև սայլ, որով քաղուած հունձքը 'ի կալատեղ կը բերէ: Կասելուն համար կը գործածուին՝ կամ, կամնասայլ (ճառճառ), հեծանոց (քառէշտ):

Մշակական անասուններն են՝ գոմէշ, եղն, և այլ եւ այլ աշխատութեանց մէջ կը գործածուին՝ ձի, ջորի, էշ:

Երկրագործը կ'ունենայ նաև էգ, կով, ոչխար, այծ, հաւնոց եւ մեղուականոց: Այս անասուններէն զիւզացի կանայք կ'առնուն՝ կաթ, բուրդ, մազ,

ձու եւ մեղր: Կաթէն կը սրատրտտեն՝ սեր, մածուն, կարագ, պանիր, ժածիկ, պինթան եւ չորթան:

Առանին աշխատութեանց հետ գիւղացի կանայք կը պարագին նաև՝ ասրագործութեամբ, ոչխարներու բուրդէն կը հիւսեն, գուլպայ (չօրսպ) սախկ, ձեռնոց, քաղախի, շաւիւր, գորգ եւ կապերտ. իսկ գառներու բուրդէն թաղիք և քեօլօղ: Ի սոցանէ մեծագոյն մասը 'ի քաղաքի կամ մի ուրիշ հրասարակ 'ի վաճառ կը հանեն:

5 — Վանտոտ գաւառի մէջ կան շատ վայրի կենդանիներ եւ թռչուններ. Վարագայ լեռը ունի բազմաթիւ երեւոյրիք, արջ, գայլ, աղուէս, նապաստակ, սամյր, կուղ, վարչաղ, կոռապաշ եւ ջրաշուն: Թռչուններն՝ բոս մեծի մտին մեծ եւ գիշատող թռչունները, որպիսիք են՝ Արծիւ, արօս, ցին, չորթան տարուկ, բաղէ, կան նաև տեօակաւոր կաքուններ, սոթակ և արտուա: Ի դիշերի՝ բու եւ մաշկաթեւ:

Դաչտերու վրայ սփռուած են՝ կռունկ, խեցխեց, արագիլ (կոտկոտառաքիլ), ձը-



կնկուլ, արօրիկ, սեւ կռիկ, ապունակ, մանգղան թեւիկ եւ մարդ խարիկ :

Շինութեանց մէջ և ծառերու վրայ անդադար կը թռչտին՝ ճնճղուկ, սարեակ, կռիկ, կաչաղակ ( անծեղ ), ծիծեռնիկ, աղաւնի ( եղունիկ ), ճախրակ մանող, յուպրոպ, լծէ լծէ եւ լսր :

Մովեղըր կամ նորա ալեաց վրայ կը լողան շատ տեսակաւոր բատեր, թռչուններ՝ այլ անծանօթ անուամբ եւ տեսակաւ :

Այս թռչուններէն շատերը դէպի հարաւային տաք դաւառներ կը գաղթեն երբ ցուրտ սկսի : Ի նոցանէ անծեղ, կռիկ եւ ճնճղուկ հայրենասէր են, ձմերան սառնամանեաց դիմանալով իրենց բոյներէն չեն հեռանար :

1 — Որո՞նք են վանորոպ գառառնի սահմանները : Ի՞նչ տեղեր ունի այս գառառը : Ի՞նչ տեղեր սորա կը ծնայն : Ո՞ր է վարաբայ լեռը, Ի՞նչ տեղին հովիտ և յոր կը սորտ : Վարաբայ լեռան շրջան ի՞նչ ծառիկներ և բանջարներ կան : Ո՞ր կէտայ վերին վարաբ, Գալիէան, Ասորիկան բերք :

2 — Վարի վարաբ Կանիէնի ունի, Ի՞նչ կայ այս լեռնաց մէջ, ո՞վ հասարակեց սորա սպարան, Վար-

ժարան, Մանգարան : Որո՞նք են այս գառառնի սահմանոր լեռներ, ո՞ր տեղ ստերակ լեռներ կան :

3 — Թառեցե՛ք մեծ և փոքր գիւղերը, ասացե՛ք ի՞նչ նոս գառառնի ո՞ր կողմերս շրայ կէտան, Ի՞նչ նշանսոր տեղեր ունին, Ի՞նչ հատմարտութեան կայ գիւղէ և Կաղաթի մէջ :

4 — Ի՞նչ փորձով կը պարապին վանայ շրջակայ գիւղացիք : Որո՞նք են իրենց շաղկաւէտ արձրիք, երկրաբան ծառիկներ փորձիներ որո՞նք են : Ի՞նչ անասուններ կը փորձածուի : Երկրաբանը ո՞րքն Ի՞նչ անասուններ կ'ուսնայ : Ի՞նչ կ'սորանայ այն անասուններին : Ի՞նչ փորձով կը պարապին գիւղացի կանայք :

5 — Անասունցե՛ք այս գառառնի վայրի կենդանիներ և իւրաւաններ, ասացե՛ք ի՞նչ կենցանի որո՞նք լեռան, դաշտի, շինութեանց և ծովեզր կը բոսորին : Ղեպի ո՞ր կը գաղթեն իւրաւաններ, երբ յետեան ցարտը կ'սկսի, ո՞ր իւրաւաններ ցարտին քրիմաւորով ո՞րքն գառառ լեռն տեղափոխեր :

Վ Ե Ր Ձ

Ա. ՄԱՍԻ ՀԱՅՐԵՆԱՅ ԻՏՈՒԹԵԱՆ

Գլուխ Երես

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Ա — Դասարան, նորա մասերը .	9
Բ — Աշխարհի գլխաւոր կողմերը .	10
Գ — Աշխարհի երկրորդական կողմեր .	13
Դ — Յատակագիծ, չափ, գծաչափ .	16
Ե — Վարժարան, նորա մասերը .	20
Զ — Վարժարանի շրջակայք .	23
Է — Վան քաղաքի գլխաւոր բաժան .	25
Ը — Վան քաղաքի շրջակայ այգիներ .	35
Թ — Վան քաղաքի ջուրերը .	38
Ժ — Օդ, գլխաւոր օդերեւոյթներ .	45
ԺԱ — Երկինք, Արև, Լուսին, աստղեր .	52
ԺԲ — Վան քաղաքի բնակիչներ և նոցա .	57
ԺԳ — Վանայ շրջակայ վանքեր գիւղեր .	64

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ : ՃՅրդ երես այդեստաննայց յատակագծի ներքեւ դրուած թուանշանայ ծանօթեան մէջ պիտի լինի՝ 1 — Արարք .

4 — Սուրբ Յակոբ :

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ



1611

ms - 91